

© Association of Judges of the RA,
http://www.judge.am/index.php?option=com_content&view=category&layout=blog&id=36&Itemid=60&lang=en. [Translation already published in Collection of judgments of ECHR in Volume 8, 2013.] Permission to re-publish this translation has been granted for the sole purpose of its inclusion in the Court's database HUDOC.

CASE OF CLIFT v. THE UNITED KINGDOM - [Armenian Translation] by the
Association of Judges of the RA

ՔԼԻՖՏԸ ԸՆԴԴԵՍ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ

2010թ. հունիսի 13-ի վճիռը

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

ՓԱՍՏԵՐ

I. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

1. Դիմողը ծնվել է 1966 թվականին և ապրում է Ուեսթքլիֆ օն Սի բնակավայրում:

A. Սկզբնական փաստերը

2. 1994թ. ապրիլի 30-ին դիմողը դատապարտվել էր տասնութ տարվա ազատազրկման՝ լուրջ հանցագործություններ, այդ թվում՝ սպանության փորձ կատարելու կապակցությամբ, որի համար նախատեսված առավելագույն պատիժը ցմահ ազատազրկումն էր: Խնդրո առարկա ժամանակահատվածում գործող օրենսդրության համաձայն՝ 2002թ. մարտի 13-ին լրացել էր նրան պայմանական ազատելու հարցը քննարկելու ժամանակը, իսկ նրան ազատելու թույլտվությունը տրվել էր 2005թ. մարտի 18-ին (տե՛ս ստորև՝ կետեր 20 և 27):

3. 2002թ. մարտի 25-ին Պայմանական ազատման հարցերով խորհուրդն առաջարկել էր պայմանական ազատել դիմողին՝ այն հիմքով, որ հանրության համար նրա վտանգավորության աստիճանն զգալիորեն նվազել է, որ միջոցառումների առաջարկվող ծրագիրը կարող է ապահովել նրա վերականգնումը, և որ դիմողը կկատարի պայմանական ազատման հետ կապված պահանջները:

4. Խնդրո առարկա ժամանակահատվածում գործող օրենսդրությամբ նախատեսված էր, որ որոշակի ժամկետով (տասնհինգ տարուց ավելի) ազատազրկման ձևով պատիժներ կրող դատապարտյալների վաղաժամկետ ազատման հարցերով վերջնական որոշում կայացնելու լիազորությունը վերապահված էր Պետքարտուղարին (տե՛ս ստորև՝ կետեր

23 և

25): Տասնհինգ տարուց պակաս ժամկետով կամ անժամկետ (ցմահ ազատազրկման ձևով) պատիժ կրող դատապարտյալների պարագայում չէր պահանջվում վավերացում Պետքարտուղարի կողմից՝ ի լրումն Պայմանական

ազատման հարցերով խորհրդի առաջարկի: 2002թ. հոկտեմբերի 25-ին Պետքարտուղարը մերժել էր Պայմանական ազատման հարցերով խորհրդի՝ դիմողի հարցով առաջարկը՝ եզրակացնելով, որ դիմողի ազատումն անընդունելի սպառնալիք կդառնար հանրության համար: Արդյունքում՝ դիմողն ազատ չէր արձակվել:

B. Ներպետական ընթացակարգեր

1. Վարույթը Դիվիզիոնալ դատարանում¹

5. 2003թ. փետրվարի 17-ին դիմողին արձակում էր տրամադրվել՝ իր պայմանական ազատումը մերժելու վերաբերյալ Պետքարտուղարի որոշման դատական վերանայման մասին դիմում ներկայացնելու նպատակով: Նրա բողոքի սկզբունքային առարկան այն էր, որ Կոնվենցիայի 5-րդ և 14-րդ հոդվածները խախտվել են այն պատճառով, որ պայմանական ազատում թույլատրելու՝ Պետքարտուղարի լիազորությունը սահմանված է դատապարտյալների միայն մեկ խմբի համար՝ նրանց, ովքեր կրում են տասնհինգ տարի կամ ավելի ժամկետով ազատազրկում (խնդրո առարկա ժամանակահատվածում գործող օրենսդրության վերաբերյալ մանրամասները տե՛ս ստորև՝ կետեր 23-31):

6. Պայմանական ազատման հարցերով խորհուրդն այնուհետև վերանայել էր դիմողի գործը և 2003թ. մարտի 17-ին որոշում էր կայացրել ազատումը չթույլատրելու մասին: Այդ որոշման պատճառների մասին մանրամասներ Դատարանին չէին ներկայացվել:

7. 2003թ. հունիսի 9-ին Դիվիզիոնալ դատարանը մերժել էր դատական վերանայման վերաբերյալ դիմողի միջնորդությունը: Վարույթի ընթացքում Պետքարտուղարն ընդունել էր, որ որոշակի ժամկետով նշանակված պատժից պայմանական ազատումը տեղավորվում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի սահմաններում, և որ այն 14-րդ հոդվածին ևս առնչվում է: Հուլիսի 2-ին եզրակացրել էր, որ ցուցաբերվել է տարբերակված մոտեցում միանման երկու խմբերի, այն է՝ տասնհինգ տարի կամ ավելի ժամկետով ազատազրկում կրած և մոտ տասնհինգ տարի ազատազրկում կրած դատապարտյալների նկատմամբ: Տարբերակված մոտեցումն այն էր, որ տասնհինգ տարի և ավելի ժամկետով ազատազրկում կրած անձանց համար անհրաժեշտ էր Պայմանական ազատման հարցերով խորհրդի առաջարկը և Պետքարտուղարի հավանությունը, մինչդեռ շուրջ տասնհինգ տարի ազատազրկում կրածների դեպքում պահանջվում էր միայն Պայմանական ազատման հարցերով խորհրդի առաջարկը: Այդուհանդերձ, նրա կարծիքով՝ տարբերակված մոտեցումը հետապնդել է երկարատև պատիժներ կրող անձանց ազատումը վերահսկելու՝ քաղաքականության և ժողովրդավարության հարցերով հաշվետու մարմնի լիազորությունն իրականացնելու իրավաչափ նպատակ: Բացի դրանից, նա գտել էր, որ այդ լիազորությունը համարժեք է նման դատապարտյալների՝ հասարակական անվտանգության և կարգուկանոնի առումով հարուցած խնդիրներին: Հետևաբար, նա եզրակացրել էր, որ 5-րդ և 14-րդ հոդվածների խախտում տեղի չի ունեցել:

2. Վարույթը վերաքննիչ դատարանում

8. 2003թ. հոկտեմբերի 30-ին դիմողին արձակում էր տրամադրվել՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու կապակցությամբ:

¹ King's Bench Divisional Court. Մեծ Բրիտանիայում՝ Արդարադատության բարձր դատարանում (High Court of Justice) բողոքարկման հարցերով արքայական բաժանմունքի ներկայացուցչություն (ժանոթագրությունը՝ թարգմանչի կողմից):

9. Պայմանական ազատման հարցերով խորհուրդը դրանից հետո վերանայել էր դիմողի գործը և 2004թ. փետրվարի 25-ին կրկին առաջարկել ազատ արձակել դիմողին: Այս անգամ Պետքարտուղարն ընդունել էր առաջարկը, և 2004թ. մարտի 10-ին պարոն Քլիֆթը պայմանական ազատ էր արձակվել:

10. 2004թ. ապրիլի 29-ին Վերաքննիչ դատարանն անփոփոխ էր թողել Յուսեֆ Զեյի վճիռը և մերժել դիմողի բողոքը: Դատարանը գտել էր, որ որոշակի ժամկետով նշանակված պատժից ազատելու հարցը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով վիճարկելի է, սակայն համաձայնել էր Յուսեֆ Զեյի հետ՝ համարելով, որ թեև համեմատվող երկու խմբերի հանդեպ տարբերակված մոտեցում ցուցաբերվել է, այնուամենայնիվ, այդ տարբերությունն օբյեկտիվորեն հիմնավորված է եղել, հետապնդել է իրավաչափ նպատակ և եղել է համարժեք:

3. *Լուսնները Լորդերի պալատում*

11. Դիմողին արձակում էր թույլատրվել՝ Լորդերի պալատ բողոք ներկայացնելու նպատակով:

12. 2006թ. դեկտեմբերի 13-ին նորին մեծությունն լորդերը միաձայն մերժել էին դիմողի բողոքը: Նրանք համակարծիք էին, որ օրենքով նախատեսված դեպքերում վաղաժամկետ ազատում հայցելու իրավունքը միանշանակ տեղավորվում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի սահմաններում: Քորնիլի լորդ Բինգհեմը նշել էր (17-18-րդ պարբերություններ).

«Կոնվենցիան անդամ երկրներից չի պահանջում ազատագրվման դատապարտված անձանց վաղաժամկետ ազատման համակարգ ստեղծել: Համաձայն Սահմանադրության՝ դատապարտյալներից կարող է պահանջվել, որպեսզի նրանք կրեն դատավորի կողմից նշանակված պատժի յուրաքանչյուր օրը կամ ազատագրվման մեջ պահվեն մինչև պատժի նշանակված տևողության կամ դրա որոշակի մասի ժամկետի լրանալը, եթե նման բան օրենքով նախատեսված է: Սակայն որոշակի (երկարատև) ազատագրվման դատապարտված անձանց մասով Անգլիայի և Ուելսի օրենքով սույն բողոքները ներկայացնելու ժամանակահատվածում նման բան սահմանված չի եղել: Օրենքը սահմանում է այն ժամկետը (որին պետք է գումարվեն կարգապահական խախտումների կապակցությամբ կարգապահական խցում տեղավորելու ձևով նշանակված տույժերի օրերը), երբ դատապարտյալն իրավունք ունի ազատ արձակվել, ինչպես նաև ավելի վաղ ժամկետ, երբ նա կարող է ազատ արձակվել, եթե ենթադրվում է, որ նրան ազատելն անվտանգ է, սակայն ազատ չի արձակվի, եթե նման հանգմունք չլինի:

Կասկածից վեր է, որ տվյալ դեպքում քննարկվող որոշակի ժամկետով նշանակված պատժներից ազատ արձակելուն նախորդող միջոցառումների համակարգ մշակելիս հաշվի են առնվել մի շարք գործոններ (տնտեսական բնույթի կամ կապված բանտերի բեռնաթափման անհրաժեշտության հետ): Սակայն կա մի նկատառում. պետք է ընդունել, որ դատապարտյալին մինչև հրապարակայնորեն նշանակված պատժի ավարտն ազատագրվման մեջ պահելը չի բխում ո՛չ հանրային և ո՛չ էլ՝ դատապարտյալի անձնական շահերից. որ այդ շահերից երբեմն բխում է, որ դատապարտյալն ազատ արձակվի ավելի վաղ՝ ողջամտության սահմաններում, և որ նման դեպքերում դատապարտյալները պետք է վերագտնեն իրենց ազատությունը (թեկուզև՝ որոշակի սահմանափակումներով), քանզի ենթադրվում է, որ նրանց ազատությունից զրկելն այլևս անիմաստ է: Ես, հետևաբար, գտնում եմ, որ այն դեպքերում, երբ ներպետական օրենսդրությամբ նախատեսված է վաղաժամկետ ազատում հայցելու իրավունք, այդ իրավունքը միանշանակ տեղավորվում է 5-րդ հոդվածի շրջանակներում, իսկ տարբեր դատա-

պարտյալների հանդեպ տարբեր մոտեցումներ ցուցաբերելը 14-րդ հոդվածի հիման վրա բողոք ներկայացնելու հիմք է ստեղծում, եթե այդ տարբերակման անհրաժեշտությունը պայմանավորված չէ այս կամ այն գործի էությամբ»:

13. Սակայն, ի տարբերություն ստորադաս դատարանների, նորին մեծությունը լորդերը վստահ չէին, թե դիմողի հանդեպ վերաբերմունքի տարբերությունը պայմանավորված է նրա «դրությամբ»² այն աստիճան, որ դիտարկվի Կոնվենցիայի 14-րդ հոդվածով խտրականությունն արգելելու լույսի ներքո: Լորդ Բինգհեմն ասել էր (28-րդ պարբերություն).

«Չեմ կարծում, թե անձնական հատկանիշները կարող են պայմանավորված լինել տարբերակված մոտեցումներով, որոնց կապակցությամբ անձը բողոք է ներկայացրել: Սակայն այստեղ պարոն Քլիֆթը բողոքում է ոչ թե իր նկատմամբ նշանակված պատժի, այլ Պայմանական ազատման հարցերով խորհրդի վերջնական առաջարկը մերժելու կապակցությամբ: Որքանով կարելի է նրան 15 տարի կամ ավելի ժամկետով (սակայն ոչ ցմահ) ազատազրկում կրող դատապարտյալների թվին դասելն անձնական հատկանիշ համարել: Ես դժվարանում եմ այս հարցին միանշանակ պատասխան տալ: Սակայն հակված եմ ցմահ ազատազրկումն անձնական հատկանիշ, իսկ ցմահ ազատազրկում կրողին՝ «այլ դրությունում» գտնվող համարել, և պարզ չէ, թե ինչու պետք է այլ կերպ դիտարկվի պարոն Քլիֆթի դասակարգումն ըստ նրա նկատմամբ նշանակված պատժի տևողության, այլ ոչ նրա կատարած հանցագործությունների բնույթի: Ես, այդուհանդերձ, կարծում եմ, որ ներպետական դատարանը պետք է ձեռնպահ մնա Կոնվենցիան ստրասբուրգյան իրավական համակարգի կողմից անմիջականորեն կամ ենթադրաբար չթույլատրված եղանակով կիրառելուց, հետևաբար, ես, ոչ առանց երկմտանքի, այս հարցը կլուծեի հօգուտ Պետքարտուղարի, ի վնաս՝ պարոն Քլիֆթի:

14. Քրեյքեդի լորդ Յոուլիը նույնանման դիտողություններ էր ներկայացրել (46-49-րդ պարբերություններ):

«Կարող եմք ասել, որ պարոն Քլիֆթի գործով նրա նկատմամբ նշանակված պատժի տևողության արդյունքում նրա դրությունը չէր փոխվել այնաստիճան, որպեսզի դիտարկվեր որպես անձնական հատկանիշ: Դրա պատճառն այն է, որ ներպետական համակարգում դատապարտյալները դասակարգված են ըստ կատեգորիաների կամ մարդկանց խմբերի՝ կախված նրանց նկատմամբ նշանակված պատժի բնույթից կամ տևողությունից: Այդ կատեգորիաներից ելնելով՝ որոշվում է, թե ինչպես են նրանց հետ վարվելու պատժի ամբողջ ընթացքում: Արդյունքում՝ համարվում է, որ նրանք գտնվում են այնպիսի առանձնակի դրությունում, որը ռեժիմային նկատառումներով կիրառվում է անձամբ նրանց նկատմամբ. մի ռեժիմ, որի պայմաններում նրանք պարտավոր են կրել իրենց պատիժը: Սա, հատկապես, ճշմարիտ է ցմահ ազատազրկում կրող դատապարտյալների պարագայում, ինչպես նաև այն դեպքերում, երբ կարճաժամկետ և երկարաժամկետ ազատազրկման դատապարտված անձանց միջև տարբերակումներ են դրվում: Այդ ամենն առավել հազվադեպ է պատահում տարբեր տևողությամբ երկարատև ազատազրկում կրող դատապարտյալների դեպքում:

Պետք է ընդունել, որ, ինչպես լորդ Բինգհեմն է նշել, անձնական հատկանիշները չեն կարող պայմանավորված լինել այն տարբերակված վերաբերմունքով, որի կապակցությամբ անձը բողոք է ներկայացրել: Ակներև է

² Այլ՝ առավել բարեհունչ հոմանիշ գործածելը հնարավոր էր, սակայն այստեղ հղում է կատարվել Կոնվենցիայի 14-րդ հոդվածին, ուր գործածվել է «դրություն» բառը (թարգմանչի կողմից):

նաև, որ երկարաժամկետ ազատագրկման դատապարտվածի կատեգորիան, որին դասվում է պարոն Քլիֆթը, առանձին կատեգորիա չէր համարվի, եթե նախատեսված չլինեի Կարգադրությամբ, որից ելնելով՝ դատապարտյալների հիշյալ խմբի հանդեպ դրսևորվում է այլ խմբերից տարբերվող վերաբերմունք՝ ազատության հիմնարար իրավունքի առնչությամբ: Սակայն նա դատապարտվել և այդ պատժի կապակցությամբ հատուկ դրությունում հայտնվել էր նախքան Կարգադրությունը, որի արդյունքում իր խմբում ընդգրկված դատապարտյալները զրկվել էին Պայմանական ազատման հարցերով խորհրդի առաջարկի հիման վրա ազատ արձակվելու իրավունքից: Հարցը, որ առաջանում է տվյալ գործի պարագայում, հետևյալն է. տարբերակող գործոնը կամ հատկանիշը, որը թույլ է տալիս անձանց կամ անձանց խմբին առանձնացնել մյուսներից և տարբերակված մոտեցում ցուցաբերել, պե՞տք է, արդյոք, անձնական հատկանիշ համարվի՝ նախքան խտրականություն ցուցաբերող անձի կողմից այն կիրառելը:

Կոնվենցիայի 14-րդ հոդվածի իմաստը (1-ին հոդվածի հետ մեկտեղ) ապահովելն է, որպեսզի Բարձր պայմանավորվող կողմերի իրավասության ներքո գտնվող յուրաքանչյուր ոք օգտվի Կոնվենցիայի 1-ին բաժնում նշված իրավունքներից ու ազատություններից՝ առանց այնպիսի խտրականության, որի դրդապատճառները Կոնվենցիայի որդեգրած արժեքների առումով պետք է անընդունելի համարվեն: Այստեղից պարզ է դառնում, որ «կամ այլ դրություն» արտահատությանը պետք է կարևորագույն նշանակություն տալ՝ ընդունելով, անշուշտ, որ արգելված դրդապատճառների թիվն անսահմանափակ չէ: Այս մոտեցման առումով, ինձ թվում է, որ 14-րդ հոդվածի պաշտպանությունից պետք չէր հրաժարվել միայն այն պատճառով, որ նախկինում ընդունված չի եղել տարբերակող այն գործոնը, որը խտրականություն ցուցաբերողին թույլ է տվել անձանց կամ անձանց խմբին վերաբերվել այլ կերպ՝ Կոնվենցիայով նախատեսված նրանց իրավունքներից օգտվելու իմաստով:

Սակայն ստրասբուրգյան իրավական համակարգն այս հարցին դեռևս չի անդրադարձել, և, ինչպես իմ հրաշալի և գիտուն բարեկամ, Ռիչմոնդի բարոնուհի Չեյլն է նշել՝ որպես պարոն Քլիֆթի գործի առարկա՝ տարբերակված վերաբերմունքի իրական պատճառ կարելի է դիտարկել ոչ թե այն հանգամանքը, թե ով է անձը կամ ինչ է նա իրենից ներկայացնում, այլ այն, թե ինչ է նա արել... Ներպետական դատարանների պարտականությունն է քայլել ստրասբուրգյան իրավական համակարգին զուգընթաց, քանի որ այն անընդհատ զարգանում է: Հարկավոր է ունենալ Կոնվենցիայի բոլոր մասնակից երկրների կողմից հավանության արժանացած ինքնասահմանափակիչ միջոց՝ սեփական իրավական համակարգերը չչարաշահելու համար: Ես համոզվեցի (ոչ առանց երկմտանքի), որ չենք կարող երկրորդ հարցը պարոն Քլիֆթի օգտին վճռել»:

15. Ռիչմոնդի բարոնուհի Չեյլնը (62-63-րդ պարբերություններ) հետևյալ կարծիքն էր հայտնել.

«Ակներև է... որ արտաքսման ենթակա օտարերկրացիների համար սահմանված պայմանական ազատման ռեժիմը, որը տարբերվում է քաղաքացիների կամ այստեղ մնալու իրավունք ունեցող այլ անձանց համար սահմանվածից, համապատասխանում է 14-րդ հոդվածով արգելված խտրականության դրդապատճառներին և... հետևաբար, օբյեկտիվ հիմնավորում է պահանջում: Նույնը հաստատապես կարող է վերաբերել ռասայից, սեռից կամ մազերի գույնից ելնելով անձի հանդեպ տարբերակված վերաբերմունք ցուցաբերելուն: Սակայն կատարած հանցագործության լրջության հիման վրա վերաբերմունքը տարբերակելը պետք է դուրս մնա արգելված դրդապատճառների շարքից: Տարբերակման իրական պատճառը ոչ թե

իրավախախտի անձնական հատկանիշներն են, այլ այն, թե ինչ արարք է նա կատարել:

Այսինքն՝ պարոն Քլիֆթի և կարճաժամկետ կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց հանդեպ վերաբերմունքի միջև տարբերությունները բնավ չեն առնչվում 14-րդ հոդվածին: Օրենքը կարող է թերի թվալ: Սակայն ամեն մի ակնհայտ շեղում Կոնվենցիայով նախատեսված իրավունքի խախտում չէ: Այս դեպքում շեղումն առաջացել է կարճաժամկետ ազատազրկման դատապարտված անձանց առնչությամբ Պետքարտուղարի ձեռնարկած քայլերի և ցմահ ազատազրկման կապակցությամբ 5-րդ հոդվածով վերջինիս ունեցած պարտավորությունների արդյունքում: Օրենքն այդ ժամանակից ի վեր փոխվել է, և դժվար չէ հասկանալ, թե ինչու: Սակայն խորհրդարանի կողմից ընդունված օրենսդրությունը Կոնվենցիայով նախատեսված իրավունքներին հակասող հայտարարելը մեր խնդիրը չէ, քանի դեռ Կոնվենցիայով և դրա նախադեպային իրավունքով նման պահանջ մեզ ներկայացված չէ: Վերոհիշյալ պատճառներով, ինչպես նաև սատարելով իմ հրաշալի և գիտուն բարեկամ՝ Քորնիլի լորդ Բինգհեմի նկատառումներին՝ տվյալ գործով մենք պարտավորված չենք անել այդ»:

16. Չնայած 14-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ Պալատի եզրակացությանը, լորդ Բինգհեմը և Իթըն անդրը Յեյվուդի լորդ Բրաունը շարունակել էին քննարկել, թե «դրության» առկայության պարագայում որքանով է օբյեկտիվորեն հիմնավորված վերաբերմունքի տարբերությունը: Լորդ Բինգհեմի կարծիքը հետևյալն էր (33-րդ պարբերություն).

«Պարոն Քլիֆթին ազատ արձակելու վերաբերյալ Պայմանական ազատման հարցերով խորհրդի առաջարկը Պետքարտուղարի կողմից 2002թ. հոկտեմբերին մերժելու պահի դրությամբ վերանայման իրավունք ունեցող ցմահ ազատազրկվածները և Նորին գերազանցության բանտերի դատապարտյալներն արդեն իսկ ընդգրկված էին Պայմանական ազատման հարցերով խորհրդի լիազորությունների շրջանակում: Այդ հարցը նաև կարգավորվել էր *Stafford v. United Kingdom* (2002) 35 EHR 1121 գործով, որով պահանջվում էր միևնույն ընթացակարգը կիրառել վերանայման իրավունք չունեցող ցմահ ազատազրկվածների նկատմամբ: 15 տարի կամ ավելի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց հանդեպ վերաբերմունքի տարբերությունը, իմ կարծիքով, շեղում է: Տարբերակումն ինքնին չպետք է նման որոշման կայացումը չհիմնավորելու հիմք հանդիսանա: Շեղումների կարելի է հանդիպել ամենուր: Սակայն 2002 թվականից ի վեր՝ դա, իմ կարծիքով, քննադատության չդիմացող շեղման է վերածվել, քանի որ այդ ժամանակից սկսած պետք էր հասկանալ, որ այս կամ այն դատապարտյալի վտանգավորությունը հանրաճանաչ չափանիշների հիման վրա գնահատելու հիմնախնդիրը քաղաքական աստառ չունի, և այդ գործընթացին Պետքարտուղարը չէր կարողացել (և չէր էլ հավակնել) միջամտել վերադասության կարգով: Յետևաբար, ես այս խնդիրը կլուծեի հոգուտ պարոն Քլիֆթի և ի վնաս Պետքարտուղարի»:

17. Լորդ Բրաունը համաձայնել էր Լորդ Բինգհեմի եզրահանգմանը:

II. ԳՈՐԾԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

A. Պայմանական ազատման վերաբերյալ պատմականորեն ձևավորված դիրքորոշումը

18. Քրեական գործերով արդարադատության մասին 1967թ. օրենքի 59-61-րդ - բաժիններով նախատեսված է, որ որոշակի ժամկետով կամ անժամկետ պատիժների դատապարտված բոլոր անձինք իրավունք ունեն պայմանական ազատում հայցել՝ իրենց պատիժների որոշակի նվազագույն մասը կրելուց հետո: Երկու դեպքում էլ Պայմանական ազատման հարցերով խորհրդի առաջարկից հետո Պետքարտուղարն իրավասու էր որոշում կայացնել դատապարտյալին ազատ արձակելու վերաբերյալ:

Բ. Խնդրո առարկա ժամանակահատվածում պայմանական ազատման վերաբերյալ ձևավորված դիրքորոշումը

19. Դատապարտյալներին պայմանական ազատելու վերաբերյալ օրենսդրությունը հետագայում փոփոխվել էր Քրեական գործերով արդարադատության մասին 1991թ. օրենքի (1991թ. օրենք) և Հանցագործությունների (Պատիժների) մասին 1997թ. օրենքի (1997թ. օրենք) վերանայման արդյունքում:

20. 1991թ. օրենքի 33-րդ և 34-րդ բաժիններով սահմանվել էր որոշակի ժամկետով, ինչպես նաև վերանայման իրավունքով ցմահ ազատազրկման դատապարտված անձանց ազատազրկման որոշակի մասը կրելուց հետո ազատ արձակելու պարտականություն: 33-րդ բաժինը սահմանում է հետևյալը.

«Կարճաժամկետ և երկարաժամկետ ազատազրկման դատապարտված անձանց ազատ արձակելու պարտականությունը.

(1) Նշանակված պատժի կեսը կարճատև ազատազրկման դատապարտված անձի կողմից կրելուց հետո Պետքարտուղարը պարտավոր է.

- (a) առանց նախապայմանների ազատ արձակել նրան, եթե նշանակված պատժի տևողությունը տասներկու ամսից պակաս է,
- (b) պայմանական ազատ արձակել նրան, եթե նշանակված պատժի տևողությունը տասներկու ամիս է կամ ավելի:

(2) Նշանակված պատժի երկու երրորդը երկարաժամկետ ազատազրկման դատապարտված անձի կողմից կրելուց հետո Պետքարտուղարը պարտավոր է պայմանական ազատ արձակել նրան:

...»:

21. 33(5) բաժինը սահմանում է «կարճաժամկետ» և «երկարաժամկետ» ազատազրկման դատապարտված անձանց հասկացությունները.

«Սույն հատվածում...

«Երկարաժամկետ ազատազրկման դատապարտված անձն» այն անձն է, ում նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը կազմում է չորս տարի կամ ավելի,

«կարճաժամկետ ազատազրկման դատապարտված անձն» այն անձն է, ում նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը չի գերազանցում չորս տարին»:

22. 34-րդ բաժինն անդրադառնում է վերանայման իրավունքով ցմահ ազատազրկման դատապարտված անձանց վաղաժամկետ ազատմանը.

«Վերանայման իրավունքով ցմահ ազատազրկման դատապարտված անձանց ազատ արձակելու պարտականությունը

(1) Ցմահ ազատազրկման դատապարտված անձը սույն հատվածում համարվում է վերանայման իրավունքով ցմահ ազատազրկման դատապարտված, եթե.

(a) նրա նկատմամբ պատիժը նշանակվել է բռնությամբ զուգորդված կամ սեռական բնույթի հանցագործության համար և որի համար օրենքով ժամկետ սահմանված չէ,

(b) դատարանը, որի կողմից նա դատապարտվել է տվյալ հանցագործության համար, կարգադրել է, որ սույն բաժինը նրա նկատմամբ կկիրառվի պատժի ժամկետի՝ կարգադրությունում նշված որոշակի մասը կրելուց հետո:

...

(3) Եթե վերանայման իրավունքով ցմահ ազատազրկման դատապարտված անձը.

(a) կրել է նշանակված պատժի՝ կարգադրությունում նշված որոշակի մասը...

(b) կամ եթե [Պայմանական ազատման հարցերով] խորհուրդը սույն բաժնի հիման վրա թույլատրել է նրա ազատումը,

Պետքարտուղարը պարտավոր է պայմանական ազատ արձակել նրան»:

23. 35-րդ բաժինը լրացուցիչ հայեցողական իրավասություն է վերապահում երկարաժամկետ ազատազրկման դատապարտված անձանց՝ նախքան նշանակված պատժի երկու երրորդը կրելն ազատ արձակելու առումով, և սահմանում է.

«(1) Նշանակված պատժի կեսը կրելուց հետո Պետքարտուղարը կարող է պայմանական ազատ արձակել նրան, եթե [Պայմանական ազատման հարցերով] խորհուրդը նման առաջարկ է ներկայացրել»:

24. 50-րդ բաժնով Պետքարտուղարին իրավունք է վերապահված կրճատելու ազատազրկման այն ժամկետը, որը երկարաժամկետ ազատազրկման դատապարտվածները պետք է կրեն, որպեսզի իրավունք ունենան Պայմանական ազատման հարցերով խորհրդի առաջարկով ազատ արձակվել՝ 35-րդ բաժնում նշված հայեցողական իրավասությունը դատապարտյալների որոշակի խմբի մասով վերածելով պարտականության: Այն սահմանում է.

«(1) Պետքարտուղարը, խորհրդակցելով [Պայմանական ազատման հարցերով] խորհրդի հետ, կարող է համապատասխան օրենսդրական ակտով արձակված կարգադրությամբ սահմանել, որ գործերի այս կամ այն խմբի (կարգադրության մեջ նշված) առնչությամբ սույն բաժնի՝ (2) և (4) ենթաբաժիններում ստորև նամրամասնված դրույթները պետք է կիրառվեն՝ ըստ անհրաժեշտության ենթարկվելով փոփոխությունների:

(2) Վերը՝ 35-րդ բաժնի (1) ենթաբաժնում հիշատակված «կարող է» բառը պետք է փոխարինվի «պետք է» բառով...»:

25. 1991թ. օրենքի 50-րդ բաժնով իրեն վերապահված լիազորությունը Պետքարտուղարն իրականացրել է երկու դեպքում: Պայմանական ազատման հարցերով խորհրդի (գործառույթների փոխանցման) մասին 1992թ. կարգադրությամբ՝ երկարատև (յոթ տարուց պակաս) ազատազրկում կրող դատապարտյալներին ազատ արձակելու՝ 35-րդ բաժնով նրան վերապահված հայեցողական իրավասությունը վերածվել էր պարտականության: Դրան հաջորդած՝ Պայմանական ազատման հարցերով խորհրդի (գործառույթների փոխանցման) մասին 1998թ. կարգադրությամբ՝ տասնհինգ տարուց պակաս ժամկետով ազատազրկում կրող դատապարտյալներին ազատ արձակելու հայեցողական իրավասությունը պարտականության էր վերածվել: Տասնհինգ տարի կամ ավելի ժամկետով ազատազրկում կրողների մասով Պետքարտուղարը պահպանել էր նշանակված պատժի կեսը կրելուց հետո և նախքան պատժի երկու երրորդը կրելը վաղաժամկետ ազատման կարգադրություն արձակելու՝ իր հայեցողական իրավասությունը:

26. 1997թ. օրենքի 28-րդ բաժինը նախ ուժի մեջ էր մտել, իսկ ավելի ուշ՝ փոփոխվել՝ Դատարանի հետևյալ վճիռների հիման վրա (*Hussain v. the United Kingdom*, 21 February 1996, *Reports of Judgments and Decisions* 1996-I and *Stafford v. the United Kingdom* [GC], no. 46295/99, ECHR 2002-IV): Հիշյալ բաժինը սահմանում է հետևյալը.

«28. Ցմահ ազատազրկում կրող որոշ դատապարտյալների ազատ արձակելու պարտականությունը

(1A) Սույն բաժինը վերաբերում է ցմահ ազատազրկում կրող այն դատապարտյալին, ում նկատմամբ համապատասխան կարգադրությամբ սահմանվել է պատժի կրման նվազագույն տևողություն, և սույն բաժնում նման դատապարտյալի պատժի համապատասխան մասի վերաբերյալ ցանկացած հղում առնչվում է կարգադրությունում նշված պատժի տևողությանը:

...

(5) Այն դեպքերում, երբ.

(a) ցմահ դատապարտյալը, ում նկատմամբ սույն բաժինը կիրառելի է, կրել է նշանակված պատժի համապատասխան մասը.

(b) Պայմանական ազատման հարցերով խորհուրդը սույն բաժնի հիման վրա կարգադրություն է արձակել նրան ազատելու վերաբերյալ.

Պետքարտուղարը պարտավոր է պայմանական ազատ արձակել նրան:

(6) Պայմանական ազատման հարցերով խորհուրդը վերոհիշյալ (5) ենթաբաժնի հիման վրա նման կարգադրություն չի կարող արձակել ցմահ ազատազրկում կրող այն դատապարտյալի նկատմամբ, ում սույն բաժնին առնչվում է, եթե.

(a) Պետքարտուղարը դատապարտյալի գործն ուղարկել է խորհուրդ.

(b) խորհուրդը հավատացած է, որ հանրության պաշտպանության նպատակով դատապարտյալին մեկուսացված պահելն այլևս անհրաժեշտ չէ»:

27. 34-րդ բաժինը սահմանում է «ցմահ ազատազրկում կրող դատապարտյալ» հասկացությունը, որը վերաբերում է տարատեսակ անժամկետ պատիժներ կրող դատապարտյալներին:

C. Վաղաժամկետ ազատմանը վերաբերող դրույթների հետագա փոփոխությունները

28. Երկարաժամկետ ազատազրկում կրող դատապարտյալների վաղաժամկետ ազատման մասին օրենքը փոփոխվել էր Քրեական գործերով արդարադատության մասին 2003թ. օրենքով, որն ուժի մեջ էր մտել 2005թ. ապրիլի 4-ին: Պայմանական ազատման վերաբերյալ նոր դրույթները սահմանում են հետևյալը.

«244 (1) Որոշակի ժամկետով ազատազրկում կրող դատապարտյալի կողմից ... ազատազրկման՝ պարտադիր կրման ենթակա մասը կրելուց հետո Պետքարտուղարը սույն բաժնի հիման վրա պարտավոր է պայմանական ազատ արձակել նրան:

...

(3) Սույն բաժնում «ազատազրկման՝ պարտադիր կրման ենթակա մաս» արտահայտությունը նշանակում է.

(a) տասներկու ամիս կամ ավելի ժամկետով ազատազրկում կրող անձի մասով ... նշանակված պատժի կեսը կրելը ...»:

29. Վերոհիշյալ դրույթները վերաբերում են այն դատապարտյալներին, ովքեր հանցանքը կատարել են 2005թ. ապրիլի 3-ից հետո կամ ուն պայմանական ազատման ժամկետը լրացել է 2008թ. հունիսի 8-ից հետո և եթե կատարված հանցանքը բռնությանը զուգորդված կամ սեռական բնույթի չի համարվում:

30. Կորոներների³ և արդարադատության մասին 2009թ. օրենքի 145-րդ բաժնով հետագայում փոփոխվել է վաղաժամկետ ազատման մասին օրենքը՝ վերացնելով վերաբերմունքի տարբերությունները՝ կապված ազատազրկման տևողության և պայմանական ազատման ժամանակային սահմանափակումների հետ: Դրանով փոփոխվել է 1991թ. օրենքի 35-րդ բաժինը՝ Պետքարտուղարի համար հայեցողական իրավասության փոխարեն սահմանելով պարտավորություն՝ Պայմանական ազատման հարցերով խորհրդի առաջարկով ազատ արձակել բոլոր դատապարտյալներին: Այս դրույթը դեռևս ուժի մեջ չի մտել:

31. 145-րդ բաժնին ուժի մեջ մտնելուց հետո վաղաժամկետ ազատման հարցով Պետքարտուղարի վավերացումը կպահանջվի միայն այն դատապարտյալների համար, ովքեր դատապարտվել են ցմահ ազատազրկման: Մնացած բոլոր դատապարտյալների համար վաղաժամկետ ազատումը կամ կկատարվի միանգամայն ինքնաբերաբար, կամ ինքնաբերաբար, սակայն Պայմանական ազատման հարցերով խորհրդի առաջարկով:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԱՐՑԵՐ

³ Կորոներ (coroner) կամ քննիչ (դատաքննիչ), որի բացառիկ գործառույթն է՝ քննության առնել բռնության արդյունքում պատճառված մահվան կամ հանկարծամահության հետ կապված դեպքերը (ծանոթագրությունը՝ թարգմանչի կողմից).

1. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 5-ՐԴ ՅՈՂՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ՝ 14-ՐԴ ՅՈՂՎԱԾԻ ՅԱՍԿՑՈՒԹՅԱՄԲ

32. Դիմողը բողոքել է, որ Պայմանական ազատման հարցերով խորհրդի 2002թ. մարտի 25-ի՝ իրեն երաշխավորությամբ ազատ արձակելու վերաբերյալ առաջարկից հետո ազատագրվումը շարունակելու արդյունքում խախտվել են Կոնվենցիայի 5-րդ և 14-րդ հոդվածներով երաշխավորված իր իրավունքները: Նա վիճարկել էր, որ այն պահանջը, որ տասնհինգ տարի կամ ավելի ժամկետով ազատագրվում կրող անձանց դեպքում, Պայմանական ազատման հարցերով խորհրդի առաջարկից բացի, պահանջվում է վավերացում Պետքարտուղարի կողմից, մինչդեռ տասնհինգ տարուց պակաս ժամկետով կամ անժամկետ պատիժներ կրող անձանց պարագայում պահանջվում է միայն Պայմանական ազատման հարցերով խորհրդի առաջարկը, հանգեցնում է վերաբերմունքի չհիմնավորված տարբերության:

33. 5-րդ հոդվածը սահմանում է, որ.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(a) անձին օրինական կարգով կալանքի տակ պահելն իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո:

...

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է»:

14-րդ հոդվածի բովանդակությունը հետևյալն է.

«Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հանդուժմանից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից»:

34. Կառավարությունն առարկել է՝ նշելով, որ տվյալ դեպքում Կոնվենցիայի 5-րդ և 14-րդ հոդվածների որևէ խախտում տեղի չի ունեցել:

A. Ընդունելիությունը

1. Կողմերի դիրքորոշումները

35. Դիմողը պնդել է, որ այս գանգատը տեղավորվում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի սահմաններում՝ առնչվելով նաև 14-րդ հոդվածին:

36. Կառավարությունն ընդունել է, որ դիմողի գանգատը 14-րդ հոդվածի կիրառման առումով տեղավորվում է 5-րդ հոդվածի սահմաններում:

2. Դատարանի գնահատականը

37. Դատարանը կրկնում է, որ 14-րդ հոդվածը լրացնում է Կոնվենցիայի և արձանագրությունների հիմնական դրույթները: Այն ինքնուրույն գոյություն ունենալ չի կարող, քանի որ առնչվում է բացառապես այդ դրույթներով երաշխավորված «իրավունքներից ու ազատություններից» օգտվելու հետ կապված խնդիրներին: Այդուհանդերձ, 14-րդ հոդվածի կիրառումը միշտ չէ, որ Կոնվենցիայով երաշխավորված հիմնական իրավունքներից որևէ մեկի խախտում է ենթադրում, և, այս առումով, այն ինքնուրույն դրույթ է հանդիսանում (տե՛ս *Thlimmenos v. Greece* [GC], no. 34369/97, կետ 40, ECHR 2000-IV գործը, *Kafkaris v. Cyprus* [GC], no. 21906/04, կետ 159, ECHR 2008-... գործը և *Carson and Others v. the United Kingdom* [GC], no. 42184/05, կետ 63, 16 March 2010) գործը: Խնդրո առարկա ազատության իրավունքը հարգելու հետ կապված պահանջներին համապատասխան կիրառված միջոցը, 14-րդ հոդվածի համակցությամբ դիտարկելու դեպքում, այնուամենայնիվ, կարող է հոդվածի խախտում համարվել՝ իր խտրական բնույթի պատճառով (տես, օրինակ, *the Belgian linguistic case* (գործի էությունը), 23 July 1968, կետ 9, Series A no. 6, pp. 33-34): Չետևաբար, 14-րդ հոդվածի կիրառումն ապահովելու համար բավարար է, որպեսզի գործի առարկա փաստերը տեղավորվեն Կոնվենցիայի կամ դրա արձանագրությունների հիմնական դրույթներից որևէ մեկի շրջանակում (տես, օրինակ, *Stec and Others v. the United Kingdom* (dec.) [GC], nos. 65731/01 and 65900/01, կետ 39, ECHR 2005-X գործը, *Burden v. the United Kingdom* [GC], no. 13378/05, կետ 40, ECHR 2008-...) գործը:

38. Ինչպես Դատարանն ավելի վաղ նշել է, Կոնվենցիայի 5-րդ հոդվածը չի երաշխավորում, որ պայմանական ազատումը կիրականացվի ինքնաբերաբար (տես, օրինակ, *Gerger v. Turkey* [GC], no. 24919/94, կետ 69, 8 July 1999) գործը: Սակայն եթե դատապարտյալների ազատման հետ կապված ընթացակարգերն իրականացվում են խտրական ձևով, դա կարող է խնդիրներ առաջացնել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի կապակցությամբ՝ 14-րդ հոդվածի համակցությամբ (տես *Webster v. the United Kingdom* գործը, no. 12118/86, Commission Decision of 4 March 1987, unreported և վերը հիշատակված *Gerger*-ի գործը, կետ 69): Այդ պատճառով՝ Դատարանը գտնում է, որ դիմողի գանգատը տեղավորվում է 5-րդ հոդվածի շրջանակներում, և որ 14-րդ հոդվածը ևս կիրառելի է: Դատարանը նաև նշում է, որ Կառավարությունը ևս ընդունել է այդ:

39. Դատարանը եզրակացնում է, որ դիմումն ակնհայտ անհիմն չէ՝ Կոնվենցիայի 35 կետ 3 հոդվածի իմաստով: Դատարանը նաև նշում է, որ այն անընդունելի համարելու այլ հիմքեր ևս չկան: Չետևաբար, դիմումը պետք է ընդունելի համարել:

B. Գործի էությունը

1. Որքանով է դիմողի կարգավիճակն «այլ դրություն» համարվում

a. Կողմերի դիրքորոշումները

i. Կառավարությունը

40. Կառավարությունն ընդգծել է, որ 14-րդ հոդվածը ենթակա է երկու կարևոր սահմանափակման: Առաջին, այն կիրառվում է միայն Կոնվենցիայով նախատեսված իրավունքների և ազատությունների իրականացումն ապահովելու նպատակով: Երկրորդ, այն կիրառելի է միայն խտրականության այն դրսևորումների նկատմամբ, որոնք կատարվել են 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերի, այդ թվում՝ «այլ

դրության» սահմաններում: Ինչ վերաբերում է դիմողի՝ «այլ դրությունում» գտնվելուն, Կառավարությունը չորս նկատառում է ներկայացրել:

41. Առաջին՝ *Kjeldsen, Busk Madsen and Pedersen v. Denmark*, 7 December 1976, կետ 56, Series A no. 23 գործի վրա հիմնվելով՝ Կառավարությունը վիճարկել է, որ «այլ դրություն» արտահայտությունը պետք է ընկալվի 14-րդ հոդվածում թվարկված այլ հիմքերի իմաստային շրջանակներում:

42. Երկրորդ՝ հիմնվելով վերը հիշատակված *Gerger*-ի գործի և *Taxquet v. Belgium*, no. 926/05, կետ 87, ECHR 2009-... գործի որոշ հատվածների վրա (վերջինը ներկայումս գտնվում է Մեծ պալատի վարույթում)՝ Կառավարությունը (*Gerger*-ի գործով) պնդել է, որ Դատարանի հաստատուն իրավական դիրքորոշումը կայանում է նրանում, որ տարբեր օրենքներով սահմանված քրեական պատիժների և միջոցների կապակցությամբ կիրառվող տարբերակումները, եթե դրանք անձնավորված չեն, դուրս են 14-րդ հոդվածի շրջանակներից (տես, օրինակ, *Budak and Others v. Turkey* (dec.), no. 57345/00, 7 September 2004 և *Yılmaz and Barım v. Turkey* (dec.), no. 47874/99, 26 May 2005) գործերը: Մասնավորապես՝ *Gerger*-ի գործով Դատարանը վճռել էր, որ պայմանական ազատման հետ կապված հարցերում դատապարտյալների հանդեպ վերաբերմունքի տարբերությունները չեն կարող «այլ դրություն» համարվել, եթե դրանք պայմանավորված են հանցագործության ծանրության հարցում օրենսդրի տեսակետով: Սույն գործով Կառավարությունը վիճարկել է, որ վերաբերմունքի տարբերությունը հանցագործության ծանրության հարցում օրենսդրի դիրքորոշման արդյունք է. այնպիսի ծանր հանցագործության դեպքում, որի համար տասնհինգ տարի կամ ավելի ժամկետով ազատազրկման ձևով պատիժ նշանակելն արդարացված է, օրենսդիրը գտել է, որ նման դեպքերում հնարավոր պայմանական ազատման հարցը պետք է վճռի Պետքարտուղարը՝ ի տարբերություն տասնհինգ տարուց պակաս ազատազրկում ենթադրող ավելի թեթև հանցագործությունների: Այս առումով՝ Կառավարությունն առարկել է դիմողի այն հայտարարությունը, որ *Gerger*-ի գործով խտրականության մասին վկայող փաստերի բացակայության հարցը որոշելիս Դատարանը հաշվի է առել վերաբերմունքի տարբերության մասին ներկայացված հիմնավորումը: Կառավարության կարծիքով՝ Դատարանը կիրառել է «անձնական հատկանիշների» սկզբունքը՝ գնահատելու համար, թե որքանով է բողոքի առարկա վերաբերմունքի տարբերությունը տեղավորվում «այլ դրություն» հասկացության շրջանակներում:

43. Երրորդ՝ Կառավարությունը կարծիք է հայտնել, որ դիմողի գանգատի առարկա վերաբերմունքը պետք է դիտարկել անձնական այն հատկանիշից առանձին, որի վրա դիմողը կառուցել էր իր գանգատը: Հակառակ դեպքում գանգատի բուն առարկան կարող էր 14-րդ հոդվածի հիման վրա գանգատ ներկայացնելու հիմք ստեղծել, ինչը կարող էր նեղացնել 14-րդ հոդվածի շրջանակները (*Jones v. the United Kingdom* (dec.), no. 42639/04, 13 September 2005): Կառավարությունը վիճարկել է, որ քանի որ դիմողը փորձել է իրեն համեմատել տասնհինգ տարուց պակաս ժամկետով պատիժ կրող դատապարտյալների հետ, այդ տարբերությունը չի կարող գանգատի առարկայից առանձին դիտարկվել: Պատժի տևողությունը՝ որպես այդպիսին, որևէ առնչություն չունի դատապարտյալների կողմից պատժի կրումը կանոնակարգող օրենքի հետ, չնայած Կառավարությունն ընդունել է, որ դատապարտյալ լինելը կարող է 14-րդ հոդվածի իմաստով «այլ դրություն» համարվել:

44. Եվ վերջապես, ի հավաստումն իր երրորդ նկատառման, Կառավարությունը վիճարկել է՝ նշելով, որ եթե Կոնվենցիայով նախատեսված իրավունքներն ապահովելու համար կիրառված միջոցները դուրս չեն Կոնվենցիայով նախատեսված իրավունքների շրջանակից, ապա այդ տարբերությունն ինքնին չի կարող Կոնվենցիայի 14-րդ հոդվածով բողոք ներկայացնելու հիմք հանդիսանալ: Հակառակ դեպքում՝ 14-րդ հոդվածի շրջանակը կնեղանար: Որպես օրինակ Կառավարությունը հիշատակել էր 5 (4) հոդվածը. որոշակի ժամկետով նշանակվող պատժի առումով այդ հոդվածի պահանջը բավարարվել է՝ պատիժը դատարանի կողմից նշանակվելու

միջոցով: Կառավարության կարծիքով՝ բազմանշանակ է այն փաստարկը, որ որոշակի ժամկետով ազատազրկումն ինքնին համարվում է «դրություն», քանզի 5 (4) հոդվածը որոշակի ժամկետով ազատազրկում կրող դատապարտյալի կողմից պատժի հետագա կրման անհրաժեշտության վերանայում չի պահանջում, մինչդեռ անորոշ ժամկետով պատիժ կրող դատապարտյալի դեպքում հետագա պատժի օրինականության վերանայումը նախատեսված է:

45. Այդ պատճառով՝ Կառավարությունը եզրակացրել է, որ 14-րդ հոդվածի ներգործության շրջանակի ցանկացած ընդլայնում՝ դիմողի առաջարկած տարբերակով, կհակասեր այդ դրույթի էությանը և դրա հիմքում ընկած սկզբունքներին, ինչպես նաև Դատարանի հաստատուն իրավական դիրքորոշմանը: Կառավարությունը նաև նշել է, որ Լորդերի պալատը միաձայն որոշել է, որ դիմողի նկատմամբ նշանակված պատժի տևողությունն «այլ դրություն» հասկացության մեջ չի տեղավորվում: Կառավարությունը Դատարանին կոչ է արել վճռել, որ սույն գործով 14-րդ հոդվածը կիրառելի չէ:

ii. Դիմողը

46. Դիմողն առարկել է՝ նշելով, որ նշանակված պատժից ելնելով՝ դատապարտյալների տարբեր կատեգորիաների նկատմամբ տարբեր վերաբերմունք ցուցաբերելը Կոնվենցիայի 14-րդ հոդվածի իմաստով տեղավորվում է «այլ դրություն» հասկացությունում: Նա առարկել է Կառավարության այն դիտարկմանը, թե 14-րդ հոդվածի իմաստով «այլ դրություն» կարող է համարվել միայն այն դրությունը, որն ակնհայտորեն համանման է այդ հոդվածում թվարկված օրինակներից որևէ մեկին: Նա վիճարկել է՝ նշելով, որ պետք է նկատի առնել Կոնվենցիայի նպատակը, մասնավորապես, որ այն նշակվել է՝ ժողովրդավարական հասարակությունում ընդունված իդեալներն ու գաղափարները պահպանելու և զարգացնելու համար (տե՛ս վերը հիշատակված *Kjeldsen, Busk Madsen and Pedersen* գործը, կետ 53): Յետևաբար, «այլ դրություն» բառերը չպետք է մեկնաբանվեն այնաստիճան բառացի, որ սովորեն Կոնվենցիայի նպատակները, որոնք շարադրված են ներածությունում (համաձայն որի՝ Կոնվենցիայի նպատակը «դրանում հռչակված իրավունքների համընդհանուր և արդյունավետ ճանաչումն ու պահպանումն է») և ամրագրված են Կոնվենցիայի 1-ին հոդվածում: Յենվելով *Salgueiro da Silva Mouta v. Portugal*, no. 33290/96, կետ 28, ECHR 1999-IX և *Engel and Others v. the Netherlands*, 8 June 1976, կետ 72, Series A no. 22 գործերի վրա՝ դիմողը վիճարկել է՝ նշելով, որ 14-րդ հոդվածը պետք է առավել լայն մեկնաբանել, և որ այդ դրույթում հստակ սահմանված կատեգորիաները թվարկված են որպես օրինակներ, և դրանք սպառնիչ չեն: Նա նաև հղում է կատարել ֆրանսերեն տեքստին, որտեղ գործածված է ոչ թե «status», այլ «situation» բառը (“*toute autre situation*”)՝ նշելով, որ դա խոսում է առավել լայն մեկնաբանելու անհրաժեշտության մասին իր ներկայացրած փաստարկների օգտին:

47. Դիմողն այնուհետև նշել էր, որ 14-րդ հոդվածում հստակ թվարկված խտրականության արգելված հիմքերն ամեն դեպքում համապատասխանում են «անձնական հատկանիշ» հասկացությանը: Նա մատնանշել է այդ ցանկում «գույքային» բառը ներառելու հանգամանքը, ինչպես նաև *Chassagnou and Others v. France* [GC], nos. 25088/94, 28331/95 and 28443/95, ECHR 1999-III գործով Դատարանի եզրակացությունն այն մասին, որ գույքի չափով պայմանավորված տարբերակված վերաբերմունքը հողատերերի նկատմամբ՝ խտրականություն է, որը խախտում է 14-րդ հոդվածը: Յետևաբար, դիմողը եզրակացրել է, որ պատշաճ իմաստային պարզաբանման պարագայում 14-րդ հոդվածի շրջանակը չէր սահմանափակվի անձնական հատկանիշների հիման վրա: Դիմողը նաև հիշատակել է մի շարք գործեր, որոնցում, իր կարծիքով, Դատարանը 14-րդ հոդվածը կիրառելի է համարել՝ առանց «անձնական հատկանիշների» հետ կապված պնդումների (ի թիվս

այլ գործերի՝ տե՛ս *Stubbings and Others v. the United Kingdom*, 22 October 1996, *Reports* 1996-IV; *National Union of Belgian Police v. Belgium*, 27 October 1975, Series A no. 19; *Larkos v. Cyprus* [GC], no. 29515/95, ECHR 1999-I և *Sidabras and Džiautas v. Lithuania*, nos. 55480/00 and 59330/00, ECHR 2004-VIII գործերը): Նա նաև ընդգծել էր, որ դատապարտյալ լինելը Դատարանն ավելի վաղ համարել է «դրություն» պայմանավորող հանգամանք (տե՛ս *Shelley v. the United Kingdom*, no. 23800/06, 4 January 2008 գործը) և նշել, որ 14-րդ հոդվածի կիրառման հանգամանքը ճշտելու ստույգ ճանապարհը պարզելն է՝ արդյո՞ք առկա է եղել իրավական այնպիսի իրավիճակ, որը սերտ կապված է անհատի անձնական հանգամանքների և ապրելակերպի հետ: Դիմողի դեպքում իրադրությունը հետևյալն էր. նա ընդգրկված էր մի խմբում, որի նկատմամբ իրավական այլ ռեժիմ էր կիրառվում, մի ռեժիմ, որը վերահսկում էր նրա՝ հասարակություն վերադառնալու գործընթացը և ընտանիքի հետ շփումները, որոնք միանշանակ կապված են անձնական հանգամանքների և ապրելակերպի հետ:

48. Ինչ վերաբերում է Կառավարության տեսակետին, թե տարբեր օրենքներով սահմանված քրեական պատիժների և միջոցների կապակցությամբ կիրառվող տարբերակումները, եթե դրանք անձնավորված չեն, դուրս են 14-րդ հոդվածի շրջանակներից, դիմողը կրկնել է, որ քննության են առնվել ոչ թե անձնական հատկանիշները, այլ անձնական հանգամանքները: Նա առարկել է այն դիտարկմանը, թե *Gerger*-ի գործը թույլ է տալիս ենթադրել, որ տվյալ գործի պարագայում «դրության» մասին խոսք չկա՝ նշելով, որ *Gerger*-ի գործով Դատարանը եզրակացրել էր, որ տարբերակված վերաբերմունքի արդյունքում խտրականություն տեղի չի ունեցել: Նույնը վերաբերում էր Կառավարության՝ ի պաշտպանություն իր ներկայացրած փաստարկների, հիշատակած այլ գործերին:

49. Դիմողը նաև վիճարկել է, որ այն վերաբերմունքը, որի մասին այս կամ այն դիմողը բողոքում է, պետք է դիտարկվի այն «դրությունից» առանձին, որի վրա բողոքը հիմնված է: Քանի որ պատշաճ վերաբերմունքը տեղավորվում է Կոնվենցիայով նախատեսված իրավունքի սահմաններում, մարդկանց հանդեպ՝ նրանց տարբերվող իրավիճակին համարժեք վերաբերմունք չցուցաբերելը կարող է հանգեցնել 14-րդ հոդվածի խախտման: Դիմողը նաև պնդել է, որ իր պատժի տևողությունը նշանակալի հետևանքներ է ունեցել, այդ թվում, սակայն ոչ միայն, պայմանական ազատման հարցում կիրառվող ռեժիմի տարբերությունը: Օրինակ՝ նրա պատժի տևողությունն ազդել էր նաև նրա նկատմամբ բանտում սահմանված անվտանգության աստիճանի վրա, ինչն էլ, իր հերթին, անդրադարձել էր ընտանեկան շփումների հետ կապված հարցերի վրա:

50. Հետևաբար, դիմողը եզրակացրել է, որ ինքը գտնվել է «այլ դրությունում»՝ 14-րդ հոդվածի իմաստով: Իր անձնական հանգամանքների վրա անդրադարձել էին այն իրավական ռեժիմի տարբեր կողմերը, որն իր նկատմամբ կիրառվել էր՝ պատժի տևողության արդյունքում: Նա այնուհետև վիճարկել է, որ Լորդերի պալատը չէր հերքել իր պնդումն առ այն, որ ինքը գտնվել է «այլ դրությունում»՝ 14-րդ հոդվածի իմաստով, այլ ընդամենը նպատակահարմար էր համարել հարցն առկախել, մինչև որ Դատարանը հնարավորություն ունենա ամենայն մանրամասնությամբ քննության առնել խնդիրը:

b. Դատարանի գնահատականը

51. 14-րդ հոդվածը չի արգելում վերաբերմունքի բոլոր տարբերությունները, այլ միայն նրանք, որոնք պայմանավորված են շոշափելի, օբյեկտիվ կամ անձնական հատկանիշներով կամ «դրությամբ», որոնցով անձինք կամ անձանց խմբերը տարբերակվում են միմյանցից (տե՛ս վերը հիշատակված *Kjeldsen Busk Madsen and Pedersen* գործը, կետ 56; *Berezovski v. Ukraine* (dec.) գործը, no. 70908/01, 15 June 2004 և վերը հիշատակված *Carson and Others* գործը, կետեր 61 և 70): 14-րդ

հողվածը թվարկում է այն բնորոշ հիմքերը, որոնք ձևավորում են «դրությունը», այդ թվում՝ սեռը, ռասան և գույքային դրությունը: Սակայն 14-րդ հոդվածում թվարկվածն օրինակների ցանկ է, որը սպառնիչ չէ, ինչը երևում է «այն է՝ անկախ ...-ից» բառերից (Ֆրանսերենում՝ “*notamment*”) (տես՝ վերը հիշատակված *Engel and Others* գործը, կետ 72 և վերը հիշատակված *Carson* գործը, կետ 70) և ցանկում ընդգրկված «կամ այլ դրությունից» արտահայտությունից (Ֆրանսերենում՝ “*toute autre situation*”): Տվյալ գործի պարագայում դիմողի գանգատի առարկա վերաբերմունքը չի տեղավորվում 14-րդ հոդվածում թվարկված հիմքերից որևէ մեկում: Դիմողի գանգատի բարեհաջող ընթացքի համար նա պետք է ապացուցի, որ գտնվել է «այլ դրությունում»՝ Կոնվենցիայի 14-րդ հոդվածի իմաստով:

52. Դատարանը հիշեցնում է, որ «այլ դրություն» (Ֆրանսերենում՝ էլ ավելի պարզորոշ “*toute autre situation*”) բառերն ընդհանուր առմամբ լայն իմաստով են օժտված (տես՝ վերը հիշատակված *Carson* գործը, կետ 70): Կառավարությունը փաստարկներ է ներկայացրել առավել նեղ մեկնաբանության օգտին՝ մասնավորապես առաջարկելով, որ այդ բառերն ընկալվեն 14-րդ հոդվածում թվարկված այլ հիմքերի իմաստային շրջանակներում: Դատարանը նախևառաջ նկատում է, որ թեպետ կան հատկանիշների մի շարք առանձին օրինակներ, որոնք կարող են «անձնական» համարվել այն իմաստով, որ դրանք կամ ի ծնե են կամ անքակտելիորեն կապված են անհատի ինքնությանն ու անհատականությանը, ինչպիսիք են՝ սեռը, ռասան և կրոնը, թվարկված բոլոր հիմքերը չէ, որ կարող են այդպես բնութագրվել: Այս առումով՝ Դատարանը մատնանշում է գույքային դրությունը՝ որպես խտրականության հիմքերից մեկը: Այս հիմքը լայնորեն արժարժվել է Դատարանի կողմից. *James and Others v. the United Kingdom*, 21 February 1986, կետ 74, Series A no. 98 գործով դիմողի բողոքի առարկա վերաբերմունքի տարբերությունը գույքը տիրապետողների տարբեր կատեգորիաների միջև էր. *Chassagnou and Others v. France* [GC], nos. 25088/94, 28331/95 and 28443/95, կետեր 90 and 95, ECHR 1999-III գործով տարբերությունն առկա էր խոշոր և փոքր հողատերերի միջև: Երկու դեպքում էլ Դատարանն ընդունել էր, որ 14-րդ հոդվածի դրույթները կիրառելի են:

53. Ինչ վերաբերում է «այլ դրության» մեկնաբանությանը, պատահական չէ, որ Դատարանը նպատակահարմար է գտել սահմանել «այլ դրության» հատկանիշները, որոնց կապակցությամբ, ինչպես և հոդվածում թվարկված որոշ այլ օրինակների պարագայում, կարելի է ասել, որ դրանք անձնական են այնքանով, որ ի ծնե են կամ անքակտելի: Այսպես, վերը հիշատակված *Salgueiro da Silva Mouta* գործով, կետ 28, Դատարանը գտել էր, որ սեռական կողմնորոշումն «անկասկած տեղավորվում է» 14-րդ հոդվածի շրջանակներում, իսկ *Glor v. Switzerland*, no. 13444/04, կետ 80, ECHR 2009-... գործով վճռել էր, որ ֆիզիկական հաշմանդամությունը «այլ դրության» դրսևորում է համարվում:

54. Սակայն մի շարք գործերով 14-րդ հոդվածի խախտումների առկայությունը որոշելիս Դատարանն ընդունել էր, որ «դրությունն» առկա է, ընդ որում, այդ գործերով խնդրո առարկա տարբերակման մասին չէր կարելի ասել, թե դրանք ի ծնե են կամ անքակտելի, հետևաբար, վերը քննարկվածի իմաստով՝ անձնական համարվել ևս չեն կարող: Վերը հիշատակված *Engel and Others* գործով Դատարանը վճռել էր, որ զինվորական կոչման վրա հիմնված տարբերակումը կարող է հակադրվել 14-րդ հոդվածին. տվյալ գործով բողոքն առնչվում էր վերաբերմունքի տարբերությանը, որը նախնական կալանքի ընթացքում ցուցաբերվել էր, մի կողմից, սպաների, մյուս կողմից՝ ենթասպաների ու շարքային ծառայողների հանդեպ: *Pine Valley Developments Ltd and Others v. Ireland*, 29 November 1991, կետ 64, Series A no. 222 գործով Դատարանը խախտումն արձանագրել էր այն հիմքով, որ բացահայտվել էր վերաբերմունքի տարբերություն դիմողների և նախագծման թույլտվություն ունեցող, նրանց հետ միևնույն դասին պատկանող անձանց նկատմամբ: Չնայած Դատարանն այդ գործով հատուկ չէր անդրադարձել համապատասխան «դրության» խնդրին,

ենթադրվում էր, որ դիմողների գանգատի առարկան այն տարբերակումն էր, որը դրվել էր նախագծման թույլտվություն ունեցող, նոր ընդունված օրենսդրության արդյունքում շահած անձանց և նման թույլտվություն ունեցող այն անձանց միջև, ովքեր այդ օրենսդրությունից չէին շահել (այդ գործով Դատարանն արդեն իսկ ընդունել էր նախագծման վերաբերյալ դիմողների բողոքը, իսկ նախագծման թույլտվությունն անվավեր էր ճանաչվել: Տես վճռի կետ 26): Վերը հիշատակված *Larkos v. Cyprus* գործով (կետ 21), որով Դատարանը եզրակացրել էր, որ տեղի է ունեցել 14-րդ հոդվածի խախտում՝ մի կողմից պետական գույքի վարձակալների, մյուս կողմից՝ մասնավոր սեփականատերերի գույքի վարձակալների միջև դրված տարբերակման արդյունքում, կողմերը չէին վիճարկել 14-րդ հոդվածի կիրառումը, և Դատարանն այլ որոշում կայացնելու պատճառ չէր ունեցել: Վերը հիշատակված *Shelley* գործով Դատարանը համարել էր, որ դատապարտյալ լինելու հանգամանքը 14-րդ հոդվածի իմաստով՝ տեղավորվում է «այլ դրություն» հասկացության շրջանակներում: Վերը հիշատակված *Sidabras and Džiautas v. Lithuania* գործով ևս Դատարանն ուղղակի չէր անդրադարձել «այլ դրության» հարցին, սակայն 14-րդ և 8-րդ հոդվածների խախտումն արձանագրելով՝ ակամա ընդունել էր, որ ՊԱԿ-ի նախկին գործակալի կարգավիճակը տեղավորվում է 14-րդ հոդվածի սահմաններում: Դեռ վերջերս, *Pauljuk v. Slovakia*, no. 10699/05, կետ 54, ECHR 2006-XI (հատվածներ), Դատարանն ընդունել է, որ դիմողը, ում հայրությունը ճանաչվել էր դատական կարգով, հայտնվել է մի «դրությունում», որը կարելի է համեմատել ենթադրյալ հայրերի ու մայրերի վիճակի հետ, ում հայրությունն իրավաբանորեն ենթադրվում է, սակայն դատական կարգով հաստատված չէ:

55. Դատարանն այդ պատճառով գտնում է, որ թեև բազմիցս հիշատակել է, որ 14-րդ հոդվածի խախտումը հիմնավորելու համար անհրաժեշտ է, որպեսզի տարբերակումը հիմնված լինի «անձնական» հատկանիշների վրա (ինչպես երևում է նաև վերը հիշատակված նախադեպերից), 14-րդ հոդվածով առաջարկվող պաշտպանությունը չի սահմանափակվում այն հատկանիշների վրա հիմնված տարբեր վերաբերմունքով, որն անձնական է համարվում՝ ի ծնե և անքակտելի լինելու կապակցությամբ: Դետևաբար, տվյալ գործով պատշաճ իմաստային պարզաբանման պարագայում (ինչպես Կառավարությունն է պնդել), ամեն դեպքում չէ, որ կկանխվեր այն տարբերությունը, որին վերաբերում է դիմողի բողոքը:

56. Բացի դրանից, Դատարանը համոզված չէ, թե Կառավարության այն փաստարկները, որ դիմողի բողոքի առարկա վերաբերմունքը պետք է դիտարկել դրա հիմք հանդիսացած «այլ դրությունից» առանձին, որևէ կերպ հաստատվում է իր նախադեպային իրավունքով: Վերը հիշատակված *Pauljuk* գործով վիճարկված տարբերակումը, դիմողի գանգատից բացի, որևէ այլ կերպ չէր հիմնավորվել, սակայն դա հետ չէր պահել Դատարանին՝ 14-րդ հոդվածի խախտումն արձանագրելու հարցում: Ցանկացած գործով անձնական կամ այլ շոշափելի հատկանիշների վրա հիմնված վերաբերմունքի տարբերության առկայության հարցը որոշելիս հարկավոր է կատարել գնահատում՝ հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքները և նկատի ունենալով, որ Կոնվենցիայի խնդիրը ոչ թե տեսական կամ երևակայական, այլ գործնականում կիրառելի և արդյունավետ իրավունքները երաշխավորելն է (տես *Artico v. Italy*, 13 May 1980, կետ 33, Series A no. 37 և *Cudak v. Lithuania* [GC], no. 15869/02, կետ 36, 23 March 2010 գործերը): Նման դեպքերում անհրաժեշտ է հիշել, որ 14-րդ հոդվածի հիմնական նպատակն է ապահովել, որ եթե պետությունը սահմանում է այնպիսի իրավունքներ, որոնք տեղավորվում են Կոնվենցիայի շրջանակներում, սակայն չեն համապատասխանում դրանով նախատեսված երաշխիքներին, այդ լրացուցիչ իրավունքները պետք է անկողմնակալորեն և հետևողականորեն կիրառվեն պետության իրավասության ներքո գտնվող բոլոր անձանց նկատմամբ, եթե վերաբերմունքի տարբերությունն օբյեկտիվորեն հիմնավորված չէ:

57. Հիմնավորելու համար իր փաստարկն առ այն, թե դիմողը չի կարողացել ապացուցել, որ գտնվել է «այլ դրությունում», Կառավարությունը, մասնավորապես,

հիմնվել է վերը հիշատակված *Gerger*-ի գործով Դատարանի եզրակացության վրա, որում նշվել է, որ տվյալ գործում տարբերակումը դրվել է ոչ թե մարդկանց տարբեր խմբերի միջև, այլ ըստ հանցագործությունների տեսակների՝ ելնելով դրանց ծանրության վերաբերյալ օրենսդրի նկատառումներից: Դատարանը կարծում է, որ *Gerger*-ի գործով որդեգրված մոտեցումը կիրառվել է մի շարք այլ գործերով ևս, սակայն բոլոր այդ գործերը վերաբերում են Թուրքիայում ահաբեկչական բնույթի հանցագործություններ կատարելու համար դատապարտված անձանց վաղաժամկետ ազատման հետ կապված հատուկ դատավարություններին կամ դրույթներին (տես, օրինակ, վերը հիշատակված *Budak and Others* գործը, վերը հիշատակված *Yılmaz and Barım* գործը, *Akbaba v. Turkey* գործը (no. 52656/99, կետ 28, 17 January 2006) և *Tanrıkulu and Deniz v. Turkey*, no. 60011/00, կետ 37, 18 April 2006, գործը): Ուստի, չնայած որ *Gerger*-ի գործից պարզ է դառնում, որ կարող են լինել դեպքեր, երբ վերաբերմունքի վիճարկվող տարբերությունները չի կարելի որակել որպես մարդկանց տարբեր խմբերի միջև դրված տարբերություններ, Կոնվենցիայի 14-րդ հոդվածով երաշխավորվող պաշտպանությունից ցանկացած բացառություն պետք է մանրամասն պարզաբանվի: Ներկա գործով դիմողի գանգատի առարկան ոչ թե իր կատարած հանցանքի ծանրության պատճառով վերաբերմունքի տարբերությունն է, այլ այդ տարբերությունը՝ կապված տասնհինգ տարուց ավելի ժամկետով ազատազրկում կրող դատապարտյալ լինելու հետ: Չնայած պատժի տևողությունը որոշակի կապ ունի հանցագործության ծանրության հետ, այլ գործոններ ևս կարող են կարևորվել, այդ թվում՝ պատիժը նշանակող դատավորի գնահատականը՝ հանրության համար դիմողի վտանգավորության վերաբերյալ:

58. Դատարանը բազմիցս ընդգծել է 5-րդ հոդվածում ներառված երաշխիքների հիմնարար կարևորությունը՝ ժողովրդավարության պայմաններում իշխանության մարմինների կողմից կամայական ձերբակալումից կամ կալանավորումից զերծ մնալու իրավունքի առումով (տես, օրինակ, *hakıncı v. Turkey* [GC], no. 23657/94, կետ 104, ECHR 1999-IV, գործը): Այն դեպքերում, երբ վաղաժամկետ ազատման մեխանիզմը դատապարտյալների նկատմամբ գործադրվում է տարբեր կերպ՝ կապված նրանց պատիժների տևողության հետ, գոյություն ունի ռիսկ (եթե վերաբերմունքի տարբերությունն օբյեկտիվորեն հիմնավորված չէ), որ դա կհանգեցնի հակասության՝ 5-րդ հոդվածի նպատակի հետ, մասնավորապես՝ անձին կամայական ձերբակալումից կամ կալանավորումից պաշտպանելու առումով: Ուստի հարկավոր է մանրակրկիտ քննության առնել վերաբերմունքի տարբերություններն այդ բնագավառում:

59. Հետևաբար, Դատարանը վերոհիշյալ բոլոր նկատառումների լույսի ներքո եզրակացնում է, որ դիմողը գտնվել է «այլ դրությունում»՝ 14-րդ հոդվածի իմաստով:

2. Առավել լավ վերաբերմունքի արժանացող դատապարտյալների համեմատ դիմողը գտնվել է, արդյոք, համանման իրավիճակում

A. Կողմերի դիրքորոշումները

i. Դիմողը

60. Ինչ վերաբերում է այլ դատապարտյալների համեմատ համանման իրավիճակում դիմողի գտնվել-չգտնվելուն, նա նշել է, որ այնքանով, որքանով նորին մեծություն լորդերն անդրադարձել էին այդ հարցին, նրանք լուծումը տվել էին հօգուտ իրեն (տե՛ս վերը՝ կետեր

16-

17): Նա վիճարկել է, որ բոլոր այն դատապարտյալները, ում նկատմամբ պայմանական վաղաժամկետ ազատումը կիրառելի է (թե՛ որոշակի ժամկետով և թե՛

անժամկետ պատիժ կրող), ենթակա են ռիսկի գնահատման, որն իրավասու է իրականացնել Պայմանական ազատման հարցերով խորհուրդը:

ii. Կառավարությունը

61. Կառավարությունն ընդունել է, որ դիմողը գտնվել է տասնհինգ տարուց պակաս ժամկետով պատիժ կրող դատապարտյալների համեմատ համանման իրավիճակում: Սակայն կասկածի տակ է առել անժամկետ պատիժ կրող դատապարտյալների հետ համանման իրավիճակում գտնվելու հանգամանքը՝ այն հիմքով, որ պատժի այդ տեսակը տարբերվում է որոշակի ժամկետով ազատազրկումից:

B. Դատարանի գնահատականը

62. Դատարանն իր նախադեպերում սահմանել է, որ 14-րդ հոդվածի խախտումը վիճարկելու համար անհրաժեշտ է, որպեսզի առկա լինի վերաբերմունքի տարբերություն համանման իրավիճակներում գտնվող անձանց համեմատ (վերը հիշատակված *D.H. and Others v. the Czech Republic* [GC] գործը no. 57325/00, կետ 175, ECHR 2007; *Burden*, կետ 60 և վերը հիշատակված *Carson* գործը, կետ 61): Դատարանը նշում է, որ «համանման իրավիճակի» առկայությունը ցույց տալու պահանջը չի ենթադրում, որ համադրվող խմբերը պետք է նույնական լինեն: Այն փաստը, որ դիմողի իրավիճակն ամբողջությամբ համանման չէ կարճաժամկետ կամ ցմահ ազատազրկում կրող դատապարտյալների իրավիճակին, ինչպես նաև տարբեր խմբերի միջև առկա տարբերությունները, չեն բացառում 14-րդ հոդվածի կիրառումը (որոշակի վերապահումներով տե՛ս *Petrov v. Bulgaria* գործը, no. 15197/02, կետ 53, 22 May 2008): Կախված իր գանգատի բնույթից՝ դիմողը պետք է ցույց տա, որ մյուսների համեմատ գտնվել է նման իրավիճակում, սակայն տարբեր վերաբերմունքի է արժանացել:

63. Սույն գործով Դատարանը նշում է, որ դիմողի բողոքը վերաբերում է դատապարտյալների պայմանական վաղաժամկետ ազատումը կանոնակարգող դրույթներին: Վաղաժամկետ ազատում թույլատրել-չթույլատրելը ռիսկի գնահատման խնդիր է. վաղաժամկետ ազատումը չթույլատրելը հետագա պատիժ չի ենթադրում, այլ արտացոլում է այդ գնահատումն իրականացնելու որակավորում ունեցողների գնահատականն առ այն, որ տվյալ դատապարտյալն անընդունելի վտանգ կներկայացնի ազատ արձակվելու պարագայում (որոշակի վերապահումներով տե՛ս *Stafford v. the United Kingdom* [GC] գործը, no. 46295/99, կետ 79, ECHR 2002-IV): Դատարանը, հետևաբար, համարում է, որ պայմանական ազատում հայցելու իրավունք ունեցող դատապարտյալի ռիսկայնությունը գնահատելու առումով պետք է տարբերություն չդրվի տասնհինգ տարուց պակաս երկարաժամկետ ազատազրկում կրող դատապարտյալների, տասնհինգ տարի և ավելի ժամկետով ազատազրկում կրողների և ցմահ ազատազրկվածների միջև: Ռիսկը գնահատելու մեթոդները և ի հայտ բերված ռիսկի կապակցությամբ ձեռնարկվելիք միջոցները, սկզբունքորեն, պետք է նույնը լինեն բոլոր դատապարտյալների համար:

64. Դատարանը, հետևաբար, եզրակացնում է, որ սույն գործի պայմաններում դիմողը կարող է պնդել, որ տասնհինգ տարուց պակաս ժամկետով ազատազրկում կրող դատապարտյալների և ցմահ ազատազրկվածների համեմատ՝ գտնվել է համանման իրավիճակում:

3. Որքանով է վերաբերմունքի տարբերությունն օբյեկտիվորեն հիմնավորված

A. Կողմերի դիրքորոշումները

i. Դիմողը

65. Դիմողը կրկին նշել է, որ այնքանով, որքանով նորին մեծություն լորդերն անդրադարձել են այդ հարցին, նրանց լուծումը հօգուտ իրեն է (տե՛ս վերը՝ կետեր 117-118): Նրա կարծիքով՝ տարբերակված վերաբերմունքը չէր հիմնավորվել, մասնավորապես այն պատճառով, որ որոշակի ժամկետով ազատագրկման փոխարեն վերանայման իրավունքով ցմահ ազատագրկման դատապարտվածներն այդպիսի պատժի հավանաբար ենթարկվել են ռիսկի առավել բարձր աստիճանի արդյունքում: Օբյեկտիվորեն հիմնավորված չէ նման անձանց համար միայն Պայմանական ազատման հարցերով խորհրդի առաջարկը պահանջելը, իսկ նվազ ռիսկային (որոշակի ժամկետով ազատագրկման դատապարտված) անձանց համար նաև Պետքարտուղարի կողմից վավերացման պահանջ սահմանելը: Նա, այս առումով, նշել է, որ Կառավարությունը չի պնդել, թե ազատվելուց հետո անձի ռիսկայնությունը գնահատելու հարցում Պետքարտուղարն առավել իրազեկ է, քան Պայմանական ազատման հարցերով խորհուրդը: Նա կրկնել է, որ տարբերակված վերաբերմունքի արդյունքում ինքը երկու տարի ավելի է անցկացրել ազատագրկման մեջ:

ii. Կառավարությունը

66. Կառավարությունը հիմնվել է հիմքերից երկուսի վրա, որոնք, վերջինիս կարծիքով, հիմնավորում էին վերաբերմունքի տարբերությունը որոշակի ժամկետով և անժամկետ ազատագրկում կրող դատապարտյալների միջև: Առաջին՝ այն վիճարկել է, որ վերաբերմունքի տարբերությունը հիմնավորվել է պատժի բնույթի տարբերությամբ: Երկրորդ՝ Կառավարությունը հայտնել է, որ տարբերությունը հիմնավորվել է 5(4) հոդվածի այն պահանջով, որ անժամկետ պատիժ կրող դատապարտյալների ազատման հարցը, ի տարբերություն որոշակի ժամկետով ազատագրկման դատապարտվածների, որոշում է դատարանը (տվյալ դեպքում՝ Պայմանական ազատման հարցերով խորհուրդը):

67. Ինչ վերաբերում է որոշակի ժամկետով ազատագրկում կրող անձանց նկատմամբ վերաբերմունքի տարբերակմանն ըստ նրանց նկատմամբ նշանակված պատժի տևողության, Կառավարությունը նշել է, որ դատապարտյալների վաղաժամկետ ազատման հարցի լուծումը որոշ դեպքերում Պետքարտուղարության հայեցողությանը թողնելը հիմնավորված է՝ 5(4) հոդվածի պահանջները պահպանելու պայմանով: Այդ հայեցողական իրավասությունը, մասնավորապես, տեղին է ամենից երկար ժամկետով ազատագրկում կրող դատապարտյալների պարագայում: Այս առումով՝ Կառավարությունն ընդգծել է, որ Պետքարտուղարը բանտերի գործունեության և քրեական գործերով արդարադատության ամբողջ համակարգի հետ կապված հարցերով հաշվետու է Խորհրդարանին, և որ Խորհրդարանը որոշել է, որ Պետքարտուղարը պետք է շարունակի որոշակի ժամկետով երկարատև պատիժներ կրող դատապարտյալների վաղաժամկետ ազատման հարցերով պատասխանատու մարմինը համարվել: Չնայած որ տասնհինգ տարին կամայականորեն սահմանված չեն է, սա մի ոլորտ է, որն անվերապահ սահմանումներ է պահանջում (տե՛ս *James and Others v. the United Kingdom*, 21 February 1986, կետ 68, Series A no. 98 և *Mellacher and Others v. Austria*, 19 December 1989, կետեր 52-53, Series A no. 169 գործերը): 1992 և 1998 թվականների կարգադրությունների (տե՛ս վերը՝ կետ 117) ուսումնասիրությունից պարզվել է, որ Խորհրդարանն անփոփոխ է թողել Պետքարտուղարի՝ քննարկման առարկա լիազորությունների շրջանակը:

68. Կառավարությունը նշել է, որ անհրաժեշտ է այս ոլորտում ընդլայնել հայեցողության շրջանակը՝ շեշտելով, որ տվյալ գործը չի առնչվում այնպիսի «անորոշ» հիմքերի, ինչպիսիք են սեռը կամ ռասան: Կառավարությունը Դատարանին

կոչ է արել եզրակացնել, որ դիմողի՝ 5-րդ և 14-րդ հոդվածներով նախատեսված իրավունքները չեն ոտնահարվել:

B. Դատարանի գնահատականը

69. Վերաբերմունքի տարբերությունը կարող է խտրական համարվել, եթե այն օբյեկտիվորեն և պատշաճ հիմնավորված չէ, այլ կերպ ասած, եթե այն չի հետապնդել իրավաչափ նպատակ կամ եթե կիրառված միջոցների ու հետապնդված նպատակի միջև համամասնությունը ողջամիտ չէ: Անդամ երկրների հայեցողությանն է թողնված գնահատելը, թե որքանով են հիմնավորված որոշ չափով միանման իրավիճակներում ցուցաբերված վերաբերմունքի տարբերությունները (վերը հիշատակված *Burden*-ի գործը, կետ 60 և վերը հիշատակված *Carson* գործը, կետ 61): Այդ հայեցողության շրջանակը տարբեր է՝ կախված հանգամանքներից, խնդրո առարկայից և գործի նախապատմությունից: Կոնվենցիայի շրջանակներում պետությանը հայեցողական իրավասություն վերապահվում է այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է տնտեսական կամ սոցիալական ռազմավարության հետ կապված ընդհանուր միջոցառումներին: Սեփական հասարակության և վերջինիս կարիքներին անմիջական իրազեկվածության շնորհիվ ներպետական իշխանություններն սկզբունքորեն առավել ունակ են գնահատելու, թե ինչն է բխում հանրային շահերից կամ ինչ է անհրաժեշտ սոցիալական կամ տնտեսական բնագավառում, քան միջազգային դատավորը, ուստի Դատարանը, ընդհանուր առմամբ, հարգում է օրենսդրի որդեգրած քաղաքականությունը, եթե այն «ակնհայտորեն անհիմն չէ» (*Stec and Others v. the United Kingdom*, [GC], nos. 65731/01 and 65900/01, կետ 52, ECHR 2006): Չնայած նույնպիսի լայն հայեցողության շրջանակ սահմանված է նաև բանտարկյալների և քրեական քաղաքականության հետ կապված հարցերով, Դատարանն, այնուամենայնիվ, պետք է մանրամասն քննություն իրականացնի այն դեպքերում, երբ բողոքը վերաբերում է ներպետական մակարդակով կիրառված միջոցների արդյունքում տեղի ունեցած կանայական կամ անօրինական ձերբակալմանը կամ կալանավորմանը:

70. Կառավարությունը գտել է, որ սույն գործով կիրառված միջոցը հիմնավորված է խնդրո առարկա բանտարկյալների տվյալ խմբի ռիսկայնության և քրեական գործերով արդարադատության համակարգի հանդեպ հանրային վստահության նկատառումներով: Վերջինիս վերաբերյալ Դատարանը, ինչպես և վերը հիշատակված *Stafford*-ի գործով (կետ 80), նշել է, որ պարզ չէ, թե քրեական գործերով արդարադատության համակարգի հանդեպ հանրության վստահության ձևավորումն ինչու պետք է այն դատապարտյալի տևական ազատազրկում պահանջի, ով կրել է հանցագործության համար նշանակված պատժի համապատասխան ժամկետը և այլևս անվտանգ է հանրության համար: Այդուհանդերձ, Դատարանը համարում է, որ որոշ դատապարտյալների նկատմամբ վաղաժամկետ ազատման առավել խիստ կանոնների սահմանումը կարող է արդարացված համարվել այն դեպքերում, երբ ապացուցվում է, որ նրանք, ուն այդ կանոնները վերաբերում են, ազատ արձակվելուց հետո զգալի վտանգ կներկայացնեն հանրության համար: Ուստի՝ Դատարանն ընդունում է, որ դատապարտյալների տարբեր խմբերի հանդեպ վերաբերմունքի նման տարբերությունները, սկզբունքորեն, հետապնդում են հանրությանը պաշտպանելու իրավաչափ նպատակ:

71. Իսկ տասնհինգ տարի և ավելի ժամկետով ազատազրկում կրող և անժամկետ պատիժ կրող դատապարտյալների հանդեպ վերաբերմունքի տարբերությունների կապակցությամբ Դատարանը նկատում է, որ անժամկետ պատժի փոխարեն որոշակի ժամկետով պատիժ նշանակելը կարող է վկայել այն մասին, որ խնդրո առարկա անձն ազատ արձակվելուց հետո ոչ թե բարձր, այլ նվազ վտանգավոր կլինի հանրության համար: Դատարանը եզրակացնում է, որ սույն գործի

դեպքում միայն ռիսկի գործոնով կարող է հիմնավորվել վաղաժամկետ ազատման տարբեր պահանջները (տե՛ս վերը՝ կետ 70): Հաշվի առնելով ցմահ ազատազրկման դատապարտվածների ակնհայտորեն առավել զգալի ռիսկայնությունը՝ Դատարանն այն կարծիքին է, որ եթե համակարգը վերջիններիս նկատմամբ ավելի մեղմ պայմաններ է ստեղծում վաղաժամկետ ազատման համար, իսկ տասնհինգ տարի կամ ավելի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց համար սահմանում է առավել խիստ պայմաններ, դա որևէ օբյեկտիվ հիմնավորում չի կարող ունենալ: Այս առումով՝ 5 (4) հոդվածի պահանջները, որոնցով սահմանվում է դատական կարգով ազատ արձակվելու՝ ցմահ ազատազրկման դատապարտվածների իրավունքը, չեն կարող հիմնավորել երկարատև ազատազրկման դատապարտվածների հանդեպ նվազ նպաստավոր պայմանները:

72. Տասնհինգ տարուց պակաս և տասնհինգ տարի և ավելի ժամկետով ազատազրկում կրող անձանց հանդեպ վերաբերմունքի տարբերության առումով՝ Կառավարությունը չի համաձայնել, որ վերոհիշյալ շենը կամայական է, և որ նման անվերապահ սահմանումն անհրաժեշտ է և տեղին: Դատարանն սկզբունքորեն ընդունում է, որ վաղաժամկետ ազատման առավել խիստ պայմանների սահմանումը կարող է պայմանավորված լինել սահմանված անվերապահ կանոններով և համարում է, որ նման անվերապահ սահմանումը չի կարող ինքնին Կոնվենցիայի թերություն համարվել (տե՛ս *Twizell v. the United Kingdom*, no. 25379/02, կետ 24, 20 May 2008; *Amato Gauci v. Malta*, no. 47045/06, կետ 71, 15 September 2009 և *Allen and others v. the United Kingdom* (dec.), no. 5591, 6 October 2009 գործերը): Հետևաբար, այն փաստը, որ տասնհինգ տարի կամ ավելի ժամկետով ազատազրկում կրող և տասնհինգ տարուց պակաս ազատազրկում կրող անձանց համար վաղաժամկետ ազատման տարբեր դրույթներ սահմանելը սույն գործով ինքնին անօրինական խտրականություն չի հանդիսանում:

73. Այդուհանդերձ, դիմողի և վերը նշված համեմատվող խմբերից որևէ մեկի հանդեպ վերաբերմունքի ցանկացած տարբերություն կարող է հիմնավորվել միայն այն դեպքում, եթե դրա արդյունքում տարբերակում դնողները փաստացի հասել են հետապնդած իրավաչափ նպատակին: Սույն գործի շրջանակներում Կառավարությունը չի ապացուցել, որ Պետքարտուղարի կողմից վավերացումը կարող է ապահովել, որպեսզի դատապարտյալների տվյալ խմբի վտանգավորությունն ազատվելուց հետո նվազագույնի հասցվի: Ինչպես Լորդերի պալատում նկատել է լորդ Բինգհեմը՝ դիմողին ազատ արձակելու վերաբերյալ Պայմանական ազատման հարցերով խորհրդի առաջարկը Պետքարտուղարի կողմից մերժվելու պահի դրությամբ ցմահ ազատազրկման դատապարտվածների ազատման հետ կապված հարցերը հանձնվել էին Պայմանական ազատման հարցերով խորհրդի բացառիկ իրավասությանը: Տարբերակված վերաբերմունքն այն դատապարտյալների հանդեպ, ովքեր կրում են տասնհինգ տարի կամ ավելի ժամկետով ազատազրկում և որոնց ազատման հարցի լուծումը շարունակում է կախված լինել Պետքարտուղարի որոշումից, այլևս որևէ քննադատության չդիմացող շեղում է, քանի որ հանրության համար ընդունելի չափանիշների հիման վրա որևէ դատապարտյալի ռիսկայնության գնահատումը խնդրո առարկա ժամանակահատվածում ոչ քաղաքական բնույթի խնդիր էր համարվում, և որի նկատմամբ Պետքարտուղարը չէր կարող (և չէր էլ հավակնել) միջամտել վերադասության կարգով (տե՛ս վերը՝ կետ 20):

74. Այդ հանգամանքները հաշվի առնելով՝ Դատարանը համարում է, որ վաղաժամկետ ազատման ընթացակարգը, որը կիրառվել էր դիմողի նկատմամբ, և որի պայմաններում տասնհինգ տարուց պակաս ժամկետով, ինչպես նաև անժամկետ ազատազրկում կրողներին հնարավորություն էր ընձեռվում Պայմանական ազատման հարցերով խորհրդի առաջարկով ազատ արձակվել, իսկ տասնհինգ տարի և ավելի ժամկետով ազատազրկում կրողների դեպքում պահանջվում էր նաև Պետքարտուղարի վավերացումը, զուրկ է որևէ հիմնավորումից:

75. Հետևաբար, տեղի է ունեցել 5-րդ հոդվածի խախտում՝ 14-րդ հոդվածի հետ մեկտեղ:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

76. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է հետևյալը.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Աձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

A. Վնասը

1. Նյութական վնասը

77. Դիմողն առանց չափը ճշգրտելու որոշակի գումար է պահանջել որպես նյութական վնասի փոխհատուցում՝ նշելով, որ եթե խտրական վերաբերմունքը չլիներ, ինքը կարող էր ազատ արձակվել 2002թ. մարտին, երբ Պայմանական ազատման հարցերով խորհուրդն առաջարկել էր ազատ արձակել իրեն: Նա նշել է, որ ազատագրվման ընթացքում շաբաթական 8 GBP է վաստակում: Ազատ արձակվելուց հետո փորձել է աշխատանքի անցնել, սակայն տևական ազատագրվման հետևանքով ձեռք բերած հոգեբանական բարդությունների արդյունքում չէր աշխատել և որպես անաշխատունակության նպաստ՝ շաբաթական 90 GBP է ստանում: Նա հաշվարկել է իր եկամուտների տարբերությունը, որը, սննդի և այլ նպատակներով կատարված ծախսերը հանելուց հետո, կազմել է շաբաթական 60 GBP:

78. Կառավարությունն առարկել է՝ նշելով, որ եթե դիմողն ազատ արձակվեր 2002թ. հոկտեմբերի 25-ին (այդ օրը Պետքարտուղարը մերժել էր ազատման առաջարկի վավերացումը), նա, միևնույն է, շահարկելու էր ազատվելուց հետո իր՝ ենթադրաբար ունեցած հնարավորությունները: Կառավարությունը, օրինակ, նշել է, որ նա կարող էր բանտ վերադարձվել: Հետևաբար, նյութական կորուստների մասին ցանկացած պնդում շահարկում է: Ամեն դեպքում, Կառավարությունն առարկել է՝ նշելով, որ անաշխատունակության նպաստի նպատակն այն ծախսերը հոգալն է, որն անաշխատունակ անձը կարող է կատարել: Իսկ բանտում գտնվելու ընթացքում դիմողի կարիքները բավարարվել են բանտային վարչակազմի կողմից: Հետևաբար, Կառավարությունը նշել է, որ նյութական վնասի հատուցման պահանջը պետք է մերժել:

79. Դատարանը նշում է, որ բանտից ազատվելուց հետո դիմողին տրամադրվել է նպաստ՝ անաշխատունակության ժամանակահատվածում իր հիմնական կարիքները հոգալու համար անհրաժեշտ եկամտով ապահովելու նպատակով: Ազատագրվման ընթացքում նրա այդ կարիքները բավարարել էր բանտային վարչակազմը: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ դիմողը չի ապացուցել, որ բանտում անցկացրած լրացուցիչ ժամանակի արդյունքում եկամուտ է բաց թողել, ուստի նյութական վնասի փոխհատուցման պահանջը մերժում է:

2. Ոչ նյութական վնասը

80. Որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում դիմողը պահանջել է 60.000 GBP՝ ազատությունից զրկվելու և ընտանեկան միջավայրից կտրվելու արդյունքում

իրեն պատճառված հիասթափության և հուսահատության կապակցությամբ՝ նույնանման իրադրությունում երկրում ընդունված չափանիշների հիման վրա:

81. Կառավարությունը կրկնել է, որ դա շահարկում է, որը կատարվելու էր անգամ այն պարագայում, եթե դիմողն ազատ արձակվեր 2002 թվականին: Կառավարությունն առաջարկել է, որ եթե Դատարանն այդքանով հանդերձ որոշի, որ պետք է վճարվի ոչ նյութական վնասների փոխհատուցում, ապա 5.000 GBP-ն միանգամայն բավարար կլինի այդ նպատակով՝ նկատի ունենալով Դատարանի վճիռը *Morsink v. the Netherlands*, no. 48865/99, կետ 74, 11 May 2004 գործով:

82. Դատարանը նշում է, որ *Morsink*-ի գործով փոխհատուցումը դիմողին վճարվել էր՝ նախքան ազատազրկվածներին բուժելու համար նախատեսված կլինիկա փոխադրվելը սովորական նախնական կալանքի վայրում գտնվելու ժամանակահատվածի կապակցությամբ: Սույն գործով Դատարանը եզրակացրել է, որ դիմողի հանդեպ խտրական վերաբերմունքի արդյունքում նա 2002թ. մարտին ազատ չի արձակվել Պայմանական ազատման հարցերով խորհրդի դրական եզրակացությունից հետո: Ընդունելով, որ այդ ժամանակ ազատվելուց հետո նրա հնարավոր ճակատագիրը շահարկումների տեղիք է տալիս, Դատարանը գտնում է, որ դիմողը 2004 թվականին ազատ արձակվելուց հետո է ազատություն ձեռք բերել:

83. Հետևաբար, Դատարանը եզրակացնում է, որ դիմողի ազատման վերաբերյալ Պայմանական ազատման հարցերով խորհրդի 2002թ. մարտի առաջարկի վավերացման մերժումը Պետքարտուղարի կողմից, ինչպես նաև 2002թ. մարտից մինչև 2004թ. մարտն ընկած ժամանակահատվածում կրած ազատազրկումը դիմողի մոտ կարող էր հուսահատության, անորոշության և տագնապի զգացողություն առաջացնել, որը չի կարող փոխհատուցվել սոսկ խախտումն ընդունելու միջոցով: Ուստի Դատարանը վճռում է, որ որպես ոչ նյութական վնասների փոխհատուցում պետք է վճարվի 10000 եվրո:

B. Ծախքեր և ծախսեր

84. Դիմողը փոխհատուցում է պահանջել նաև ներպետական դատարաններում և Դատարանում գործը ներկայացնելու հետ կապված ծախքերի և ծախսերի կապակցությամբ: Նա նշել է, որ չնայած ներպետական դատարանում իրեն իրավական օգնություն տրամադրվել էր, դրա դիմաց իրեն հաշիվ էր ներկայացվել, և այդ գումարն ամեն պահի կարող էր գանձվել: Նա, որպես արդարացի փոխհատուցում, խնդրել է պարտավորեցնել Կառավարությանը՝ չգանձել ներպետական դատական ծախսերը: Դիմողը նաև պահանջել է 48.038.16 GBP՝ որպես ներպետական դատարաններում կատարված ծախսերի փոխհատուցում, որի չափը նա բացատրել էր իրավական օգնության շրջանակներում իր փաստաբաններին վճարված գումարի և նրանց ծառայությունների առևտրային սակագների միջև առկա տարբերությամբ: Ներպետական դատարաններում քննության ընթացքում վճարված իրավաբանական ծառայությունների դիմաց վճարելու մասին վկայող անդորրագրեր չեն ներկայացվել:

85. Սույն Դատարանում կատարած ծախսերի մասով դիմողը պահանջել է 12.592.50 GBP՝ ներառյալ ԱԱՀ-ն: Դրանից 7.108.75 GBP վճարվել էր նրա ներկայացուցիչներին՝ դիմումը կազմելու և դիրքորոշում մշակելու, Կառավարության դիրքորոշումն ուսումնասիրելու և արդարացի փոխհատուցման պահանջի վերաբերյալ դիտարկումներ ներկայացնելու համար նրանց կատարած շուրջ երեսուն ժամ տևողությամբ աշխատանքի դիմաց: Եվս 5.483.75 GBP վճարվել էր իրավախորհրդատուներին՝ դիմումը վերջնական տեսքի բերելու, դիմողի ներկայացուցիչներին խորհրդատվություն տրամադրելու, դիրքորոշումները վերանայելու և արդարացի փոխհատուցման պահանջը ձևակերպելու դիմաց: Այդ ծախսերի մասին վկայող անդորրագրեր դիմողը ներկայացրել է:

86. Կառավարությունն ընդգծել է, որ դիմողը պարտավոր չէր իր փաստաբաններին որևէ գումար վճարել ներպետական դատավարությունների ընթացքում, քանի որ նրան տրամադրվել էր իրավական օգնություն: Իսկ այն փաստը, որ նրա փաստաբանները չեն վճարվել առևտրային սակագների հիման վրա, չի նշանակում, թե դիմողը վնաս է կրել կամ պարտավոր է փոխհատուցել այդ տարբերությունը: Յետևաբար, Կառավարությունը դատարանին կոչ է անում սույն գլխի շրջանակներում որևէ փոխհատուցում չսահմանել:

87. Ինչ վերաբերում է սույն Դատարանի հետ կապված ծախսերին, Կառավարությունը նշել է, որ իրավախորհրդատուների կատարած ծախսերի մանրամասն բացվածք չի ներկայացվել, որում կնշվեր ծախսված ժամանակը կամ ծառայությունների սակագները: Իսկ դիմողի ներկայացուցիչների՝ երեսուն ժամից ավելի կատարած աշխատանքի հետ կապված ծախսերի առնչությամբ Կառավարությունը կասկածի տակ է առել իրավախորհրդատուների նշած սակագները և Դատարանին կոչ է արել այդ մասով մերժել խնդրանքը:

88. Յամածայն Դատարանի նախադեպերի՝ ծախքերի և ծախսերի փոխհատուցում կարող է սահմանվել միայն այն դեպքում, երբ դրանք փաստացի և անհրաժեշտաբար կատարվել են դիմողի կողմից, և եթե դրանք չափի առումով ողջամտության սահմաններում են: Սույն գործով Դատարանը նշում է, որ ներպետական վարույթի ընթացքում դիմողին տրամադրվել է իրավական օգնություն, և որ նա այդ առնչությամբ որևէ ծախս չի կատարել: Յետևաբար, Դատարանը մերժում է ներպետական վարույթում կատարված ծախքերի և ծախսերի վերաբերյալ փոխհատուցման պահանջը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանում կատարած ծախսերի կապակցությամբ Դատարանը նշում է, որ իրավախորհրդատուներին դիմողի վճարած գումարների մանրամասն բացվածքը ներկայացված չէ, և նկատում է, որ դիմողի դիրքորոշումը Դատարանում ըստ էության նույնն էր, ինչ ներպետական դատարաններում ներկայացվածը: Յաշվի առնելով Եվրոպայի խորհրդի կողմից իրավական օգնության կարգով տրամադրված 850 եվրոն՝ Դատարանը որոշում է, որ որպես Ստրասբուրգի դատարանում կատարված ծախքերի ու ծախսերի փոխհատուցում պետք է վճարվի 7.150 եվրո:

C. Տուգանային տոկոսները

89. Դատարանը նպատակահարմար է գտնում, որպեսզի տուգանային տոկոսը գանձվի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության սահմանային տոկոսադրույքի հիման վրա՝ հավելված երեք տոկոս:

ՎԵՐՈԳՐՅԱԼԻ ՅԻՄԱՆ ՎՐԱ՝ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ

1. Դիմումն ընդունելի է *համարում*:

2. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտում՝ 14-րդ հոդվածի հետ մեկտեղ:

3. *Վճռում է՝*

(a) որ պատասխանող պետությունը պետք է Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ վճիռն ուժի մեջ մտնելու օրվանից երեք ամսվա ընթացքում դիմողին վճարի 10,000 (տասը հազար) եվրո՝ գումարած գանձվելիք

բոլոր հարկերը՝ որպես ոչ նյութական վնասների փոխհատուցում, և 7,150 (յոթ հազար հարյուր հիսուն) եվրո՝ գումարած դիմողից գանձվելիք բոլոր հարկերը՝ որպես ծախքերի և ծախսերի փոխհատուցում. հիշյալ գումարները պետք է հաշվարկվեն ֆունտ սթեռլինգով՝ փոխհատուցման օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով.

(b) որ վճարումը վերոհիշյալ եռամսյա ժամկետի ավարտից հետո կատարելու դեպքում չվճարված գումարի մասով պետք է հաշվարկվի տուգանային տոկոս, որը հավասար է չկատարված պարտավորության ժամանակահատվածում եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության սահմանային տոկոսադրույքին՝ հավելած երեք տոկոս:

4. *Մերժում է* դիմողի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարվել է անգլերենով. գրավոր հրապարակվել է 2010թ. հունիսի 13-ին՝ Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն:

Լորենս Ըրլի

Լեխ Գարլիցկի

Քարտուղար

Նախագահող